

**«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՍԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

ՆԱԽԱԲԱՆ

«Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ Քոլեջ, ՄՈւՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ. -ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՍՓՈՓՈՒՄ4

 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ
 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ9

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ.....9

 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....9

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ.....12

 ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ12

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....14

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....17

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....27

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ32

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ36

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ39

VIII. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....43

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ.....45

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....48

 ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ52

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....53

 ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ53

 ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ55

 ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ.....57

 ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ58

 ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....59

 ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....59

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ` ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Փորձագիտական խումբն արտաքին գնահատում իրականացնելիս հաշվի է առել, որ քոլեջն ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում է առաջին անգամ:

ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան՝ Քոլեջն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Կարևորելով նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում ուսումնական հաստատության ունեցած դերն ու նշանակությունը՝ փորձագիտական խումբը հույս է հայտնում, որ սույն զեկույցը և խորհրդատվությունները հնարավորություն կտան առավել հստակ ուրվագծել կարիքները, պլանավորել և իրականացնել ծրագրեր, որոնք կնպաստեն կրթական գործընթացների բարելավմանը:

Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, մոդուլային ծրագրերի համար սահմանված են արդյունքները, նպատակները, բովանդակությունը, կատարման չափանիշները: Կիրառելով դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներ՝ քոլեջը կարողանում է թողարկել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտներ, որոնք շարունակաբար համալրում են նաև քոլեջի դասախոսական կազմը և ապահովում կայուն սերնդափոխություն:

Քոլեջում դասավանդում են համապատասխան որակավորում և մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսներ, ուսումնական վարպետներ, ինչպես նաև երիտասարդ դասավանդողներ, ովքեր հանդիսանում են ոլորտի գործող մասնագետներ: Փորձագիտական խումբը նշում է, որ ելնելով դիտարկված կրթական ծրագրերի առանձնահատկություններից՝ ակնհայտ է դասավանդողների ստեղծագործ մոտեցումն ու նվիրումն իրենց մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու փորձը ուսանողներին փոխանցելու հարցում:

Կրթական ծրագրերն իրականացնելու համար քոլեջն ունի արվեստանոցային, արհեստանոցային, լաբորատոր, լսարանային, այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնց բարեկարգ են, հագեցած համապատասխան սարքերով և սարքավորումներով: Փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջը հնարավորինս հավասարաչափ է բաշխում առկա ռեսուրսները բոլոր կրթական ծրագրերին՝ բոլոր կրթական ծրագրերի համար ապահովելով զարգացման հավասար պայմաններ: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ուսանողական թատրոնի գործունեության հանգամանքը, փոքր բեմի նախագծման մտահղացումը, պարասրահների կահավորվածությունը, Քոլեջում առկա խոհանոցային տնտեսության պահպանման և զարգացմանն ուղղված աշխատանքները: Այս տարածքներում կազմակերպվող միջոցառումները հասարակությանը արժեքներ ու գիտելիքներ փոխանցելու հրաշալի հնարավորություն են տալիս,

ինչից Քոլեջն ու, մասնավորապես, ուսանողներն օգտվում են՝ հանրությանը ներկայանալով տարատեսակ մշակութային նախագծերով:

Ըստ փորձագիտական խմբի՝ Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջն ունի կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, կրթական ծրագրերի իրականացման համար՝ անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և ռեսուրսներ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Քոլեջը պատրաստում է աշխատաշուկայում պահանջարկված շրջանավարտներ, հետևաբար կարելի է փաստել, որ ուսումնական հաստատությունն ապահովում է շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ նախնական և միջին մասնագիտական կրթության մակարդակում, հատկապես՝ դիտարկվող «Դերասանական արվեստ», «Ռեժիսուրա», «Խահարարական գործ» կրթական ծրագրերում, հետազոտություններն ունեն ընդգծված առանձնահատկություններ: Ուստի, դիտարկելով այս ուղղությամբ Քոլեջում իրականացվող աշխատանքները, նշված ոլորտների կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչն անմիջականորեն կապված է ստեղծարար մոտեցմամբ իրականացվող ցանկացած խնդրի, յուրաքանչյուր առաջադրանքի և թեմայի՝ լինի դերակատարում, բեմադրություն, ճաշատեսակի մշակում և պատրաստում և այլն:

Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջն իր գործունեությունը ծավալում է հաստատված Ռազմավարական զարգացման ծրագրին համապատասխան, որտեղ ներկայացված են Քոլեջի առաքելությունը, նպատակները, հիմնախնդիրները և այլն: Փորձագիտական խումբը դիտարկում է, որ վերջինս ձևաչափային առումով հստակեցման և շահակիցներին առավել հասկանալի դարձնելու կարիք ունի: Փորձագիտական խումբը հատուկ ընդգծում է Քոլեջում ձևավորված տեսանելի և շոշոփելի բարենպաստ կրթական միջավայրի և մթնոլորտի առկայությունը՝ կարևորելով շարունակական բարելավման անհրաժեշտությունը: Վարչական և դասախոսական կազմը պատրաստակամ է ուսանողներին լրացուցիչ խորհրդատվություն տրամադրելու հարցում: Նկարտելի է Քոլեջի տնօրենի անձնական հեղինակությունը թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների, թե՛ աշխատակազմի շրջանում, ինչը նպաստում է աշխատանքային հարաբերությունների բարեդրացիական կառուցմանը, և որպես հետևանք՝ կրթական և ստեղծագործական, կազմակերպական և այլ բնույթի խնդիրների լուծման արդյունավետության բարձրացմանը: Մինևույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի իրականացրած ջանքերը հաստատության երկարաժամկետ զարգացմանն ուղղված գործընթացների իրականացման ուղղությամբ:

Կարևոր է արձանագրել Քոլեջի ներկայացվածությունը սոցիալական հարթակներում: Դրանք գործում են բավականին դինամիկ, ունեն բավականաչափ հետևորդներ, դիտելիություն: Փորձագիտական խումբը կարծում է, որ հանրության հետ հաղորդակցվելու Քոլեջի ընտրած այս եղանակը նպաստում է ուսումնական հաստատության կողմից իրականացվող աշխատանքների հանրայնացմանը, գործընթացների թափանցիկությանը, հաշվետվողականության ապահովմանը, վարկանիշի բարձրացմանը: Նշված հարթակները նպաստում են նաև հետադարձ կապ պահպանմանը շահակիցների հետ:

Փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի համագործակցային հարաբերությունները և կապերը գործատու կազմակերպությունների հետ: Քոլեջն ունի մարդկային ներուժ, անհրաժեշտ ռեսուրսներ աշխատաշուկայում պատշաճ ներկայանալու, տնտեսության տարբեր ոլորտներում՝ բիզնեսից մինչև մշակույթ, դրսևորվելու համար: Հարկ էնք համարում նշել, որ միջազգային

համագործակցության ընդլայնումը կամ մասնակցությունը միջազգային ծրագրերին և փորձի փոխանակումը լրացուցիչ հնարավորություն կստեղծեն կրթության որակի բարելավման համար: Այս ուղղությամբ Քոլեջը քայլեր ձեռնարկելու կարիք ունի:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման համակարգը քոլեջում դեռևս ներդրման փուլում է: Արձանագրենք, որ որակի մշակույթի լիարժեք ներդրման անհրաժեշտության գիտակցումը Քոլեջում ունեն ն՛ դեկավար կազմը, ն՛ դասախոսական անձնակազմը, ն՛ ուսանողությունը: Սակայն ամբողջապես գիտակցված և հստակեցված չեն որակի ապահովման պատասխանատուի անելիքները և պարտականությունները: Քոլեջի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքը դեռևս չի կարողանում հավաքագրել և վերլուծել անհրաժեշտ և հավաստի տվյալներ, որոնք պետք է հիմք հանդիսանան որոշումներ կայացելու համար: Քոլեջին հարկավոր է համակարգել պլանավորման և հաշվետվողականության գործընթացները՝ համաձայն գործող ռազմավարական զարգացման ծրագրի: Փորձագիտական խումբը կարծում է, որ որոշումների կայացման գործընթացում շահակիցների առավել ակտիվ ընդգրկումը նույնպես կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Որակի ներքին ապահովման ենթակառուցվածքի գործունեության լավարկումը, հստակ ու չափելի նպատակների սահմանումը մեծապես կնպաստեն քոլեջի զարգացմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

- 1) Ղեկավար կազմի ունեցած հեղինակությունը ներքին և արտաքին շահակիցների շրջանում:
- 2) Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխումը կրթական ծրագրերի իրականացման նպատակով:
- 3) Աշխատաշուկայի կարիքներից բխող կրթական ծրագրերի առկայությունը:
- 4) Մասնագիտական բարձր որակներ և համապատասխան որակավորում ունեցող դասավանդողները:
- 5) Աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտ-մասնագետների պատրաստումը:
- 6) Վարչական, ուսումնասօժանդակ և դասախոսական անձնակազմի կողմից ուսանողներին տրամադրվող օժանդակությունը:
- 7) Քոլեջի կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ու ենթակառուցվածքների առկայությունը:
- 8) Ուսանողներին առաջարկվող ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների առկայությունը:
- 9) Հասարակությանը գիտելիքների և մշակութային արժեքների փոխանցմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
- 10) Քոլեջում կրթական միջավայրի և ստեղծագործական մթնոլորտի առկայությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

- 1) Քոլեջի շահակիցների կարիքների վերհանման ու գնահատման նպատակով իրականացվող հարցումների, դրանց արդյունքների վերլուծության անկատարությունը:
- 2) Ռազմավարական զարգացման ծրագրին համապատասխան՝ ստորաբաժանումների աշխատանքների պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմի բացակայությունը:
- 3) Քոլեջի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքի կողմից ամբողջական և հավաստի տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության բացակայությունը:

4) Դասավանդողների մասնագիտական վերապատրաստումների սակավությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Դիտարկել Քոլեջի առաքելության հստակեցման հնարավորությունը՝ կարևորելով նաև քոլեջի առանձնահատկության ընդգծումը:
2. Հստակեցնել Քոլեջի ռազմավարական զարգացման ծրագրի կառուցվածքը՝ մշակելով ծրագրի իրականացման պլան-Ժամանակացույց՝ ընդգծելով հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունները, վերջիններիս իրականացման պատասխանատուներին, ժամկետները, գնահատման առանցքային որակական և քանակական ցուցանիշները:
3. Հաշվետվությունները բխեցնել ռազմավարական հիմնախնդիրներից:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Բարելավել տվյալների հավաքագրման գործընթացը՝ մշակելով հստակ մեխանիզմներ, որոնք կնպաստեն տվյալահենք որոշումների կայացմանը:
5. Դիտարկել արտաքին ֆինանսական աղբյուրների ներգրավումը՝ հաշվի առնելով նաև մասնակցությունը միջազգային ծրագրերին:
6. Հստակեցնել քոլեջի կառավարման կառուցվածքը՝ համահնչեցնելով գործող հաստիքներին:

Մասնագիտության կրթական ծրագրերը

7. Մշակել և ներդնել ընթացիկ և ամփոփիչ գնահատման հստակ չափանիշներ և չափորոշիչներ (ռուբրիկներ)՝ ըստ կրթական ծրագրերի:
8. Մշակել գործնական հմտություններ և կարողություններ ձևավորող առաջադրանքների փաթեթներ/բազաններ՝ ըստ առանձին ՄԿԾ-ների:

Ուսանողները

9. Մշակել ընդունելության քննությունների պահանջները, բովանդակությունը և գնահատման չափանիշները՝ հրապարակելով դրանք և հասանելի դարձնելով շահակիցներին:
10. Դիտարկել օտար լեզուների դասընթացներ ներդնելու հնարավորությունը՝ ուսանողների օտար լեզուների իմացությունը բարելավելու և շարժունության հիմքեր ստեղծելու նպատակով:
11. Դիտարկել գործատուների և շրջանավարտների հաղորդակցության ձևավորման ցանցի մշակման անհրաժեշտությունը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

12. Դասավանդողների պաշտոնի նկարագրում ներառել հատուկ պահանջեր, որոնք կապահովեն Քոլեջի մասնագիտական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները:
13. Կրթական կարիքներից ելնելով՝ ֆինանսական ռեսուրսներ տրամադրել և իրականացնել դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ:

Հետազոտությունը և զարգացումը

14. Հետազոտությունների իրականացումը վերաճել ինստիտուցիոնալ քաղաքականության:

15. Խթանել դասավանդողների ստեղծագործական-հետազոտական աշխատանքների իրականացումը, արդյունքների ներդրումը կրթական գործընթացներում՝ ապահովելով նաև վերջիններիս տարածումը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

16. Լրացուցիչ ֆինանսական մուտքեր ապահովելու նպատակով շարունակել իրականացնել կարճաժամկետ ծրագրեր:
17. Շարունակել լաբորատորիանների և կրթական միջավայրի բարելավման աշխատանքները:

Հասարակական պատասխանատվությունը

18. Հաշվետվություններում ներդնել վերլուծական բաղադրիչ՝ ապահովելով խնդիրների դուրսբերմանը և բարելավումների պլանավորմանը:
19. Իրականացնել Քոլեջի պաշտոնական կայքէջի բարելավում՝ ապահովելով արտաքին գործընկերների շրջանում վստահելի և ամբողջական տեղեկատվություն:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

20. Մշակել և ներդնել արտաքին կապերի և միջազգայնացման հստակ ռազմավարություն կամ պլան՝ սահմանելով հիմնական թիրախները, գործողությունները, ժամկետները և արդյունքները:
21. Դիտարկել Erasmus+ կարողությունների զարգացման ծրագրերին դիմելու հնարավորությունները՝ ապահովելով նաև այլընտրանքային եկամուտների ներգրավումը:
22. Շարունակել ակտիվորեն համագործակցել տեղական գործատուների հետ՝ ապահովելով ուսանողների և դասախոսների փորձի փոխանակումը:

Որակի ներքին ապահովման համակարգը

23. Մշակել և ներդնել Որակի ապահովման քաղաքականություն՝ սահմանելով ՈԱ գործընթացների ուղղությունները, աշխատանքային գործիքները, գործընթացների պարբերականությունը և ակնկալվող արդյունքները:
24. Ապահովել որակի ապահովման մասնագետների մասնակցությունը կարողությունների զարգացման ծրագրերի՝ նպաստելով նրանց մասնագիտական կատարելագործմանը:
25. Մշակել և կիրառել հարցումների կազմման և իրականացման, վերլուծության հստակ մեթոդաբանություն:
26. Համագործակցել նախնական և միջին մասնագիտական այլ ուսումնական հաստատությունների ՈԱ պատասխանատուների հետ՝ ուսումնասիրելով ոլորտի դրական փորձը:



Արմեն Հարությունյան

Փորձագիտական խմբի ղեկավար

07.12.2023թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից¹.

1. **Արմեն Հարությունյան**՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Ջարգացման գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Քրիստինե Հակոբյան**՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեակալ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Նարինե Հովհաննիսյան**՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ջանիկ Ափանոսյան**՝ Երևանի Ն. Աճեմյանի անվան N 2 տարածաշրջանային պետական քոլեջի «Մենեջմենթ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Անահիտ Տերտերյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 12.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (27.01.2023թ.) ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ-ը հունվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել Քոլեջի հետ: Աշխատաժողովների ընթացքում ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն: Քոլեջն իրականացրել է նաև SWOT վերլուծություն Կրթական ծրագրեր չափանիշի շրջանակներում, որը դիտարկվել է ՈԱԱԿ-ի աշխատակիցների կողմից՝ քոլեջին որոշակի ուղղորդում տրամադրելու նպատակով: Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել է նաև միջանկյալ հանդիպում 1 մարտի 2023թ.:

¹ ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին ստուգելու նպատակով: ՄՈՒՀ-ի ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել տեխնիկական, ձևաչափային և բովանդակային թերություններ: Ինքնավերլուծությունը վերադարձվել է քոլեջին (24.05.2023թ), Քոլեջն սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 06-ը հունիսի 2023թ.:

Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 18 անձից բաղկացած աշխատանքային խմբերի կողմից, որոնցում ներգրավված են եղել դասախոսներ, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի ներկայացուցիչներ, ուսանող:

Նախապատրաստական փուլ

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագիտական խմբին աշխատանքների նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները:
2. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:
3. ՄԿՈւ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձնահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան:
4. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը²:

Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, փաստաթղթերի ուսումնասիրություն, մասնագիտական զուգահեռ հանդիպումներ և այլն:

Նախնական այց

27-ը սեպտեմբերի 2023թ. տեղի է ունեցել նախնական հանդիպում Քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային

² ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՑՈՒՅՑ

փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել հոկտեմբերի 3-6-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների (դասախոսական կազմ, ուսանողներ, շրջանավարտներ և այլն) մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ և դիտել երկու ներկայացում: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն³, ռեսուրսների դիտարկում⁴ և ֆոկուս խմբային հանդիպումներ: Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ 27-ը նոյեմբերի 2023թ.: Նախնական զեկույցը ներկայացվել է Քոլեջին 27-ը նոյեմբերի 2023թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ Քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 07.12.2023թ.



Անահիտ Տերտերյան

Փորձագիտական խմբի համակարգող

07.12.2023թ.

³ ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

⁴ ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Պատմություն.** Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջը որպես արհեստագործական ուսումնարան հիմնադրվել է 1961թ.: 2007թ. նախկին Էլեկտրատեխնիկական քոլեջի և նախկին թիվ 2 արհեստագործական ուսումնարանի միաձուլման արդյունքում անվանակոչվել է ներկայիս անվանումով: 2007 թվականին ՀՀ վարչապետի որոշումով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ՝ Քոլեջը մրցութային կարգով ընդգրկվել է Եվրոպական Միության բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված 12 բազմագործառնության քոլեջների ցանկում: Հիմնադրման օրվանից Քոլեջի գործունեությունն ուղղված է եղել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովմանը:
2. **Կրթություն.** Քոլեջն իրականացնում է 8 նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր հետևյալ մասնագիտություններով՝ «Դերասանական արվեստ», «Ռեժիսուրա», «Պարի ուսուցում», «Շուկայաբանություն», «Հաշվապահական հաշվառում», «Խոհարարական գործ», «Լուսանկարչություն», «Ոսկերչություն»: Կրթական ծրագրերի հետ կապված Քոլեջն ունի հետևյալ նպատակը՝ իրականացնելու կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Այս նպատակի իրականացման նպատակով Քոլեջն ուսումնասիրում է աշխատաշուկան՝ փորձելով բացահայտել գործատուների կարիքները: Վերհանված կարիքների հիման վրա ընթացիկ վերանայվում և բարելավվում են մոդուլային ծրագրերը: Կրթական ծրագրերի իրականացման նպատակով Քոլեջում դասավանդում է 55 դասախոս, որոնք ունեն համապատասխան որակավորումներ, ինչպես նրանցից որոշները աշխատաշուկան ներկայացնող պրակտիկ մասնագետներ են: ՄՈՒՀ-ում առկա է համապատասխան կրթական միջավայր ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու նպատակով:
3. **Հետազոտություն.** Հետազոտական աշխատանքների իրականացումը Քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից չի դիտարկվում, այնուամենայնիվ հետազոտական առաջադրանքներ ուսանողներին տրվում են բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որն ապահովում է Որակավորումների ազգային շրջանակի 4-րդ և 5-րդ մակարդակների ամբողջական ապահովմանը:
4. **Արտաքին կապեր միջազգայնացում.** Քոլեջի գործող Ռազմավարական ծրագրում արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող դրույթներ կամ նպատակներ ամրագրված չեն, վերջինս ՄՈՒՀ-ի համար ռազմավարական առաջնահերթություն կամ հմնախնդիր չի դիտարկվում: Քոլեջն ընդհանուր առմամբ համագործակցում է մոտ 40 անուն տեղական կազմակերպությունների հետ: Համագործակցությունների նպատակն է շարունակական կրթությունը, արտադրական պրակտիկաների կազմակերպումը, շրջանավարտների համար աշխատատեղերի ապահովումը և ընթացիկ ճանաչողական այցերը:

5. **Որակի ապահովում.** Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում Որակի ապահովման համակարգը ձևավորելու փորձեր իրականացվել են դեռևս 2010 թվականից, այդ ժամանակներից մինչ օրս ՄՈՒՀ-ն ունեցել է ոլորտը համակարգող մի քանի աշխատակիցներ, որոնք երկար ժամանակ չեն ծավալել գործունեություն: Քոլեջում հիմնականում իրականացվում են հարցումներ դասախոսների, ուսանողների և այլ շահակիցների հետ:

***Աղբյուր.** վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի» առաքելությունը 10 կետով և ընդլայնված ձևով սահմանված է 2023-2028թթ. գործող զարգացման ռազմավարական ծրագրում: Քոլեջի առաքելությունն է. «Լինելով ազգային կրթական համակարգի մի մասնիկ, անհատի մտավոր, քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորմանը նպաստող ուսումնական հաստատություն, Քոլեջի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում»: Քոլեջն իրականացնում է 5 միջին և 3 նախնական մասնագիտական կրթական ծրագրեր:

«Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի» զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատվել է 2023 թվականի սկզբին: Վերջինս քոլեջի ռազմավարական պլանավորման երկրորդ փորձառությունն է (նախորդը նախատեսված է եղել 2018-2023 թթ. համար): Ներկայիս ռազմավարական ծրագիրը գործող տնօրենի ընտրության ժամանակ ներկայացված զարգացման ծրագիրն է: Այն մշակվել է նախորդ՝ 2018-2023թթ. ռազմավարական ծրագրի հիման վրա: Անհրաժեշտ է փաստել, որ գործող և նախորդ զարգացման ռազմավարական ծրագրերը հիմնախնդիրների և իրականացվող քայլերի տեսանկյունից գրեթե նույնն են: Փորձագիտական այցին այդ փաստը բացատրվեց նրանով, որ COVID 19 համավարակի և պատերազմի հետևանքով նախորդ ՌԾ-ն լիարժեքորեն իրականացնել հնարավոր չի եղել, ուստի կարևորվել է, որպեսզի չիրագործված նպատակներն ու խնդիրները դիտարկվեն նաև հաջորդ հնգամյակում:

Ներկայիս ՌԾ-ն բաղկացած է 11 գլխից, որոնց շրջանակներում ներկայացված են առկա իրավիճակի վերլուծություն, Քոլեջի նպատակներ, միջնաժամկետ նպատակներ, հիմնախնդիրների ձևակերպում, խնդիրներ, թիրախներ, նպատակներ, փաստացի ցուցանիշներ, ակնկալվող արդյունքներ և արդյունքների գնահատման չափանիշներ, հիմնախնդիրների լուծման ռեսուրսների նկարագրությունը սահմանված նպատակների իրականացմանն ուղղված միջոցառումներ, գործողությունների և քայլերի հաջորդականությունն ու ժամանակացույցը և այն: Անհրաժեշտ է փաստել, որ ռազմավարական ծրագիրը բավական ծավալուն է և երբեմն տեսանելի չէ բաժինների փոխկապակցվածությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակցույցում տեսանելի չէ սահմանված գործողությունների և հիմնախնդիրների միջև կապը, գրեթե բոլոր գործողությունների համար նշված են 2023-2028թթ., սահմանված չեն գործողությունների համար պատասխանատու ստորաբաժանումը/ները, առկա չեն արդյունավետության գնահատման քանակական և որակական չափելի ցուցանիշներ: Սահմանված առաքելությանն ու նպատակներին հասնելու, դրանք արդյունավետ իրականացնելու համար Քոլեջը ձևակերպել է ռազմավարական 9 հիմնախնդիր:

Հիմնախնդիրները մանրամասնված են՝ ըստ ենթանպատակների, խնդիրների, գործողությունների: Դրանք են՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին (այսուհետ՝ ՊԿՉ) համապատասխան կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային փոփոխությունները, որակի ներքին համակարգի կատարելագործումը, դասախոսական կազմի համապատասխանությունը որակի հավաստման չափանիշներին, արդյունավետ գործունեություն իրականացնելու նպատակով տեխնոլոգիայես հագեցած, ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ձևավորումը, ուսանողների մասնագիտական և սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված բարձրորակ ծառայությունների տրամադրումը, քոլեջի տեղեկատվական բազաների զարգացումը, ձեռնարկատիրական գործունեության միջոցով լրացուցիչ միջոցների ներգրավման հնարավորությունը, հաստատության կառավարման արդյունավետության և վարչական ծառայությունների որակի կատարելագործումը, դուալ համակարգի ձեռնարկումը:

2022թ. Քոլեջում հաստատվել է «Քոլեջի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովում» ընթացակարգը, որտեղ հաստատությունը հստակեցնում է, թե ում է համարում արտաքին և ներքին շահակիցներ: Այսպես, Քոլեջի արտաքին շահակիցներն են դիմորդները և նրանց ծնողները, աշխատաշուկայի ներկայացուցիչները (գործատուները), համագործակցող համալսարանները և կազմակերպությունները, պետական կառավարման մարմինները: Որպես ներքին շահակիցներ են դիտարկվում ուսումնառողները, դասախոսական, վարչական, ուսումնասօժանող կազմերի ներկայացուցիչները և այլն:

Քոլեջի կրթական միջավայրը բարելավելու նպատակով ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվում են սոցիոլոգիական ուսումնասիրություններ՝ հարցումներ, հարցազրույցներ: Առկա են հարցումների վերլուծություններ, որոնք ընդհանրական են և հիմք չեն հանդիսացել նոր ՌԾ-ի համար: Ներքին և արտաքին շահակիցների կարիքները բացահայտվել են առավելապես տնօրեն-դասախոսական կազմ, ուսանողներ, գործատուներ անձնական հաղորդակցման շրջանակներում: Բացի այդ, անհրաժեշտ է փաստել, որ ներկայիս Քոլեջի տնօրենը երկար ժամանակ է պաշտոնավարում է և քաջատեղյակ է քոլեջի խնդիրներից: Ուսումնական գործընթացում ներգրավված են նաև գործատու-դասախոսներ, վերջիններս նույնպես մասնակցում են ընթացիկ քննարկումներին, ներկայացնում են առաջարկներ կրթական ծրագրերի վերանայման, աշխատաշուկայից եկող կարիքների վերաբերյալ:

Քոլեջում իրականացված աշխատանքների արդյունքների գնահատման հիմնական մեխանիզմ են համարվում հաշվետվությունները, որոնց հիման վրա կառուցվում է հաստատության հիմնական տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվում է Կառավարման խորհրդին: Անհրաժեշտ է նշել, որ հաշվետվությունները, որպես կանոն, հաշվետու ժամանակահատվածում իրականացված ընթացիկ աշխատանքների վերաբերյալ են և չեն ուրվագծում դրանց կապը Քոլեջի Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ Քոլեջն ունի զարգացման ռազմավարական ծագիր, որտեղ ամփոփված են իրատեսական նպատակներ և հիմնախնդիրներ, որոնք քոլեջին կարող են առաջնորդել դեպի զարգացում: Միևնույն ժամանակ խումբը նշում է, որ ՌԾ-ի կառուցվածքի հստակեցումը և հավելյալ մեծաքանակ տեղեկատվության բացառումը, կարող է նպաստել ներքին և արտաքին շահակիցների կողմից քոլեջի առաքելության և առաջնահերթությունների առավել դյուրին ընկալմանը: Հստակեցման անհրաժեշտությունը նկատելի է նաև քոլեջի առաքելության սահմանման մեջ, քանի որ 10 կետից բաղկացած և միևնույն

Ժամանակ գաղափարական իմաստով միևնույն պատկերացումներն արտահայտող առաքելությունը կարող է սահմանափակել շահակիցների կողմից քոլեջին լիարժեք ընկալելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում իրականացվող բոլոր կրթական ծրագրերն ունեն մեկ առանձնահատկություն, այն է՝ պատրաստել ստեղծագործ և նորարարական գաղափարներով ուսանողներ և շրջանավարտներ, վերջինս կարևորվում է քոլեջի ողջ անձնակազմի (ղեկավար անձնակազմ, դասախոսական և ուսանողական համակազմեր) կողմից և արտահայտվում է բոլոր կրթական ծրագրերում: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետևյալ շեշտադրումը քոլեջի առաքելության մեջ կնպաստի նաև վերջինիս առանձնահատկության ցուցադրմանը:

Ռազմավարական ծրագրի լիարժեք իրականացման նպատակով Քոլեջը կարիք ունի մշակելու իրականացման պլան-ժամանակացույց, որտեղ հստակորեն տեսանելի կլինեն հիմնախնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունները, գործողությունների իրականացման ժամկետները, պատասխանատուները և արդյունավետությունը գնահատող որակական և քանակական ցուցանիշները, օրինակ՝ դուրս համակարգի ներդրման համար սահմանել ցուցանիշներ, թե որ կրթական ծրագրերն են պլանավորում իրականացնել այդ ձևաչափով, քանի գործատու է ներգրավված լինելու գործընթացում, ովքեր են այդ գործընթացի համար պատասխանատուները, ինչ ժամկետներում է այդ ամենը տեղի ունենալու և այլն: Հստակ սահմանված ժամանակացույցի առկայությունը կնպաստի բոլոր ստորաբաժանումների աշխատանքի հստակ պլանավորմանը, քոլեջի հաստատուն առաջընթացին, սահմանված առաջնահերթությունների անխախտ իրականացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ թե ստորաբաժանումների, և թե տնօրենի տարեկան հաշվետվությունները քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից բխեցնելը կնպաստի ռազմավարական ծրագրի իրականացման ընթացիկ գնահատմանը՝ տեսանելի դարձնելով այն բացթողումները և ձեռքբերումները, որը գրանցում է քոլեջն իր գործունեության ընթացքում: Այն նաև կնպաստի, որ ընթացիկ քննարկումների միջոցով քոլեջի շահակիցները մշտապես ուշադրության կենտրոնում պահեն սահմանված առաջնահերթությունների իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն ունի առաքելություն, սահմանված իրատեսական նպատակներ ու խնդիրներ, որոնք հիմնականում արտահայտում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները և համահունչ են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը համապատասխանում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառույթն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ մպահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որն իր գործունեությունն իրականացնում է՝ առաջնորդվելով ոլորտի օրենսդրությամբ, Հիմնադրի որոշումներով, լիազոր մարմնի հրամաններով և սեփական կանոնադրությամբ: Քոլեջի կառավարման մարմիններն են հիմնադիրը, լիազոր մարմինը և կառավարման խորհուրդը: Կառավարման խորհուրդն իրականացնում է քոլեջի կոլեգիալ կառավարումը, վերջինս բաղկացած է 13 անդամից, որի կազմն հաստատվել է 2022 թվականին: Խորհուրդն ունի կանոնակարգ, իսկ նիստերն անցկացվում են հաստատված աշխատակարգով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին 2-3 տարվա ընթացքում քոլեջի նիստերը հիմնականում իրականացվել են հեռավար տարբերակով: Վերջին դեմառդեմ նիստը տեղի է ունեցել 2023 թվականի հունվարին՝ տնօրենի ընտրության ժամանակ: Նիստերի փաստաթղթաշրջանառությունն ու տեղեկատվության տարածումն իրականացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, նամակներ են ուղարկվում խորհրդի անդամներին: Առկա են վերջիններիս էլեկտրոնային նամակագրության քաղվածքները:

Քոլեջն ունի մանկավարժական խորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ և ուսանողական խորհուրդ: Մանկավարժական խորհուրդը կոլեկտիվ ղեկավարման մարմին է, որի կազմում ներգրավված են քոլեջի տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, բոլոր դասախոսները, ամբիոնի վարիչները, լաբորանտները, գրադարանավարը և ուսումնական մասի քարտուղարները: Մանկավարժական խորհուրդում քննարկվում են նոր կրթական ծրագրերի ներդրման, ուսանողների բացակայությունների վերաբերյալ հարցեր, ուսանողական մրցույթների կազմակերպման, հաղթողների խրախուսման և ընթացիկ գործունեությանը վերաբերող հարցեր և այլն: Նիստերը տեղի են ունենում յուրաքանչյուր կիսամյակում առնվազն 2-3 անգամ:

Ուսումնամեթոդական խորհրդի աշխատանքները համակարգում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, խորհրդի կազմում ընդգրկված են ամբիոնների վարիչները: Խորհուրդը քննարկում է ՄԿԾ-ների, դասավանդման և ուսումնառության մեթոդների, դասալսումների արդյունքների վերաբերյալ հարցեր:

Ուսանողական խորհուրդը զբաղվում է ուսանողական համակարգի շահերի պաշտպանությամբ, խնդիրների վերհանմամբ: Բացի այդ, կազմակերպում է տարատեսակ միջոցառումներ և սերտորեն համագործակցում է ինչպես տնօրենության, այնպես էլ բոլոր ստորաբաժանումների հետ:

Քոլեջում գործում է 4 ամբիոն՝ հումանիտար առարկաների, արվեստի մասնագիտությունների, տեխնիկա-տնտեսագիտական և արհեստագործական, նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Ըստ կարգի՝ ամբիոնը մասնակցում է մասնագիտական կրթական չափորոշիչների և ուսումնական պլանների, իրեն առնչվող գործառույթների մշակման գործընթացին, մշակում է իր գծով իրականացվող մասնագիտությունների առարկայական ծրագրերը, իրականացնում է ուսանողների դաստիարակչական աշխատանքներ, տրամադրում է համապատասխան մասնագետներ

խորհրդատվական ժամերի և լրացուցիչ պարապմունքների համար, որոշում է լրացուցիչ պարապմունքների քանակը և ծրագրային նյութը:

Ներքին գործընթացները կառավարվում են ուսումնական մասի և ստորաբաժանումների կողմից, որոնց պատասխանատուներն ունեն հստակեցված պարտականություններ, պաշտոնի նկարագրեր: Յուրաքանչյուրը կառավարվում է իր կանոնակարգով: Այս ուղղությամբ քոլեջը ստեղծել է կառավարման օղակները կանոնակարգող փաստաթղթային հենք:

Քոլեջի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ով վերընտրվել է 2023 թվականի հունվարին: Անհրաժեշտ է նշել, որ տնօրենը մեծ հեղինակություն է վայելում քոլեջում, և ներքին շահակիցները վստահում են նրան որոշումների կայացման գործընթացը:

Քոլեջն ունի կառավարման կառուցվածք, որտեղ վերջին փոփոխությունները կապված են կարիերայի խորհրդատուի և կազմակերպադաստիարակչական գծով փոխտնօրենի հաստիքների ավելացման հետ: Անհրաժեշտ է նշել, որ կառավարման կառուցվածքային միավորների միջև փոխկապակցվածությունները տեսանելի չեն, սակայն պաշտոնի նկարագրերում հստակ արտահայտված են հերարխիկ կապերը, պատասխանատվությունների շրջանակը:

Երկու ՌԾ-ում էլ ռազմավարական առաջնահերթություն է համարվում ֆինանսական պլանավորումը՝ քոլեջի ռազմավարական նպատակներին և խնդիրներին ներդաշնակ: Ներկայացված 2020, 2021, 2022 թթ. նախահաշիվների ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ ֆինանսների տնօրինման ժամանակ հիմնական ծախսերը բաժին են ընկնում աշխատավարձին 61,01%, կոմունալ ծառայություններին 4,46%, պայմանագրային ծառայություններին 0,89%, ընթացիկ և նորոգման ծառայություններին 0,28%, նյութերի գնմանը 1,04% և ըստ անհրաժեշտության: Չնայած այն հանգամանքին, որ ռազմավարական պլանավորման կարևոր և առանցքային կետերից է համարվում դասախոսական կազմը համալրելը և բարելավելը, ինչին հասնելու համար նպատակադրել են շարունակել և զարգացնել դասախոսների պարբերական վերապատրաստումները, բյուջեի 2020, 2021, 2022 կատարողականներում այս ուղղությամբ ընդամենը մեկ աշխատակից է մասնակցել վճարովի վերապատրաստման:

Մեկ այլ ռազմավարական կարևոր հիմնախնդիր է տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր ձևավորելը, այս հիմնախնդրի լուծման ուղղություններից մեկն է մշտապես բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարվա մեկնարկի, նոր մասնագիտության (Լուսանկարչության) ներդրման հետ կապված ձեռք են բերվել 1 մլն 333 հազար դրամի նյութատեխնիկական բազա: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջի ղեկավարությունը կարևորում է բոլոր ծրագրերի համաչափ զարգացումը և ֆինանսական ռեսուրսները բաշխվում են այնպես, որ բոլոր կրթական ծրագրերն ունենան համապատասխան ռեսուրսային ապահովվածություն:

Քոլեջն ունի նաև արտաբյուջե, որը կազմում է բյուջեի մոտավորապես 12 %-ը, որը ձևավորվում է ուսման վճարների և տնտեսված գումարների հաշվին, վերջինս տրամադրվում է քոլեջի աշխատակիցներին որպես լրավճար կամ աշխատավարձ այն ստորաբաժանումների աշխատակիցներին, որոնց հաստիքները ներկայացված չեն պետության կողմից առաջարկված պարտադիր հաստիքացուցակում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լրավճարները տրվում են համահավասար, իսկ ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամները լրացուցիչ վարձատրություն ստացել են իրականացրած աշխատանքների համար:

Ռազմավարական նպատակների իրականացման համար քոլեջը ռեսուրսների և հաստիքների համալրվածության խնդիրներ չունի: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջի վերաբերյալ հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու գործընթացների արդյունավետ կազմակերպման նպատակով 2023թ. սեպտեմբերից Քոլեջն ունի նոր աշխատակից՝ հասարակայնության կապերի պատասխանատու, վերջինս վճարվում է քոլեջի արտաբյուջեի հաշվին: Պատասխանատուի հիմնական և ամենակարևոր գործառույթն է համարվում քոլեջի PR-ի ապահովումը և տեսանելիության բարձրացումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների հետ պայմանավորված վերջին երկու տարվա ընթացքում քոլեջում մշակվել են բազմաթիվ փաստաթղթեր՝ կանոնակարգեր, ընթացակարգեր, որոնց մի մասը իրենց լիարժեք գործարկումը չի գտել՝ պայմանավորված վերջիններիս հրատապ մշակմամբ:

Քոլեջի ներքին շահակիցներից դասախոսները և ուսանողները ընդգրկված են կառավարման խորհրդում համապատասխանաբար մանկավարժական խորհրդի և ՈԻԽ-ի առաջադրմամբ: Դասախոսները ընդգրկված են նաև մանկավարժական և կառավարման խորհրդներում: Վերջիններս որոշումներին տեղեկանում են ամբիոնի վարիչների միջոցով:

Ուսանողներն իրենց կրթական կարիքների բավարարման համար առավելապես դիմում են տնօրենությանը, օրինակ՝ բաժնագրել են թատրոնի լուսավորության, վարագույրների, նոր ձայնային սարքավորումների ձեռքբերման հարցերը, որոնց մեծ մասին դրական լուծում է տրվել: Բացի այդ, որակի ապահովման ենթակառուցվածքի կողմից առաջին կուրսեցիների շրջանում իրականացված հարցումների արդյունքների հիման վրա ուսանողները ցանկություն են հայտնել դեռ առաջին կուրսից ուսումնասիրել մասնագիտական մոդուլներ, ինչը, ինչպես պարզվեց, լուծվել է ավագ կուրսերի որոշ գործնական դասերին մասնակցելով: Անհրաժեշտ է փաստել, որ քոլեջում կառավարման գործընթացը ներառական է, որոշումները կայացվում են քննարկումների հիման վրա՝ մեծ տեղ տալով նաև ուսանողների ներգրավվածությանը և վերջիններիս կարիքների բացահայտմանը:

Քոլեջն ունի 2023-2028 թթ. զարգացման ռազմավարական երկարաժամկետ ծրագիր, որը քոլեջի երկարաժամկետ պլանավորման երկրորդ փորձառությունն է: ՌԾ-ին համապատասխան գործողությունների իրականացման պլան ժամանակացույց ՄՈԻՀ-ը դեռևս չի մշակել: Ինչպես նաև ՌԾ-ում սահմանված չեն ցուցիչներ, որոնք ցույց կտան սահմանված արդյունքների ձեռքբերումը: Քոլեջի կարճաժամկետ գործընթացների հիմքում ընկած են ստորաբաժանումների, ամբիոնների տարեկան աշխատանքային պլանները: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարեկան պլանավորումները հիմնականում ընթացիկ, ուսումնական տարվա հետ կապված գործողություններն են, որոնց կապը ռազմավարական պլանավորման հետ ակնառու չէ:

Քոլեջն իր գործունեության վրա ազդող և պլանավորման մեջ ուղղորդող գործոններից է համարում արտաքին և ներքին շահակիցներից ստացած արձագանքները, դրա համար անցկացնում է հարցումներ, քննարկումներ: Արտաքին գործոններից ուսումնասիրվում է շուկան և դրա զարգացումը, որի արդյունքում արդեն երկու ուսումնական տարի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ ընդունելություն չի իրականացվում՝ համարելով հետընթաց ապրող մասնագիտություն, ինչպես նաև դրան գուզընթաց այլ քոլեջներում տարածված մասնագիտություն: Աշխատաշուկայի ուսումնասիրության և արտաքին շահակիցներից ստացած ազդակների արդյունքում այս ծրագրի փոխարեն ներդրվել է «Լուսանկարչական գործ» ՄԿԾ-ն: Ծրագրի իրականացման համար քոլեջը ձեռք է բերել համապատասխան գույք և ընդգրկել է դասախոսական կազմ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ, հաշվի առնելով ներքին

գործոնները, օրինակ՝ խմբերում սովորողների մեծ թիվը, կրթության կազմակերպման արդյունավետությունը, երկու արհեստագործական հիմքով մասնագիտությունների՝ «Ֆոնարարական գործ» և «Ոսկերչություն», գործնական պարապմունքների ժամանակ խմբերը բաժանվում են փոքր՝ մինչև 10 հոգանոց ենթախմբերի: Անհրաժեշտ է նշել, որ գործոնները բացահայտվում և հաշվի են առնվում առավելապես բանավոր քննարկումների, այլ ոչ՝ համակարգային վերլուծությունների միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում որոշ գործընթացներ իրականացվում են որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով, օրինակ՝ «Դերասանական արվեստ» մասնագիտության համար ստեղծվել է նոր փոքր դահլիճ, հաշվի առնելով ուսանողների կարիքները, աշխատանքի ընթացքում հասկացել են, որ դահլիճը ակուստիկ խնդիրներ ունի և պլանավորում են այդ հարցը լուծել ձայնամեկուսացման միջոցով: Այդուհանդերձ, նման գնահատումները տեղի են ունենում ոչ թե հավաքագրված տվյալների վերլուծության հենքով, այլ բանավոր քննարկումների միջոցով:

ՄԿԾ-ների արդյունավետությունը ՄՈՒՀ-ում գնահատվում է հարցումների, դասալսումների, ինչպես նաև ընթացիկ և դիպլոմային աշխատանքների պաշտպանության ընթացքում ուսանողների թատերական ներկայացումների, համտեսների կազմակերպման և ցուցադրությունների միջոցով: ՄԿԾ-ների արդյունավետության ցուցանիշներ են համարվում շրջանավարտների աշխատանքի տեղավորման և կրթության շարունակականության վերաբերյալ տվյալները: ՄԿԾ-ների արդյունավետության ցուցանիշ քոլեջը նաև դիտարկում է ավարտական աշխատանքներից ստացած ուսանողների գնահատականները, գործատուների արձագանքը: Անհրաժեշտ է նշել, որ ուսանողների կեսից ավելին ունեն լավ և գերազանց արդյունքներ:

ՄԿԾ-ների որակի վերաբերյալ տեղեկատվություն քոլեջը տրամադրում է իր ֆեյսբուքյան էջի միջոցով, որտեղ տեղադրվում են ուսանողների և շրջանավարտների ներկայացումներից, գործնական աշխատանքներից հատվածներ: Հաջողության հասած իրենց շրջանավարտներին քոլեջը հրավիրում է նաև վարպետաց դասերի՝ նպատակ ունենալով մոտիվացնել ուսանողներին շրջանավարտների հաջողություններով: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջի ֆեյսբուքյան էջն ունի մեծ տեսանելիություն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քոլեջում կառավարումը հիմնված է կոլեգիալության վրա, թե խորհուրդները, թե ներքին խորհրդակցական մարմինները իրականացնում են կանոնադրական իրենց առաքելությունը՝ արդյունքում անմիջական մասնակցություն ունենալով քոլեջի զարգացման գործընթացներին: Հստակեցված պարտականությունները և միջստորաբաժանումային համագործակցությունը հնարավորություն են տալիս իրականացնել համակարգված աշխատանքներ և նպաստել կառավարման արդյունավետության ապահովմանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է կառուցվածքային գծապատկերում ստորաբաժանումների միջև կապերի արտացոլումը, նաև նոր ստորաբաժանման ներառումը, ինչը կամբողջացնի կառավարման կառուցվածքը:

Դրական է, որ երկու ՌԾ-ում էլ քոլեջը հստակ սահմանում է իր առաջնահերթությունները հիմնախնդիրների միջոցով, այդուհանդերձ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի սահմանելու հստակ որակական և քանակական ցուցիչներ, որոնք հնարավորություն կընձեռի քոլեջին գնահատելու և վերահսկելու իր առաջընթացը: Նման մոտեցում որդեգրելու արդյունքում կներդրվի արդյունքահենք կառավարման համակարգ:

Փորձագիտական խումբը գովելի է համարում, որ քուլեջն իր բյուջեն բաշխելիս կարևորում է բոլոր կրթական ծրագրերի նյութատեխնիկական միջոցների հավասարաչափ զարգացումը, որը նպաստում է բազայի շարունակական բարելավմանը և ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը: ՄՈՒՀ-ը նաև քայլեր է ձեռնարկում համալրել մարդկային ռեսուրսը՝ ներգրավելով ռազմավարական առաջնահերթությունների կատարմանը նպաստող մասնագետներ և հնարավորության սահմաններում խրախուսում է իր աշխատակիցներին: Արդյունքում հնարավոր է դառնում ապահովել ուսումնական և կառավարչական գործընթացների անընդհատ աշխատանքը: Մինևույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ Քուլեջն ունի ներուժ և մարդկային ռեսուրս ներգրավվելու միջազգայնացման գործընթացներում, վերջինիս համար անհրաժեշտ է պատասխանատու անձ, ով կունենա համապատասխան հմտություններ (օտար լեզվի իմացություն, բանակցություններ սկսելու կարողություն) և կկարողանա գտնել նոր գործընկերներ և ծրագրեր: Այս ամենը կնպաստի դասախոսական և ուսանողական համակազմերի շարունակական զարգացմանը, մոտիվացիայի բարձրացմանը և քուլեջի ռեսուրսային հնարավորությունների կատարելագործմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քուլեջի կողմից փաստաթղթային հենք ստեղծելուն ուղղված ջանքերը, սակայն հարկ է նշել, որ այդ ջանքերը կարող են չարդարացվել, եթե գործընթացները չեն համակարգվում այդ փաստաթղթային հենքով, Քուլեջը կարիք կունենա գնահատելու այդ փաստաթղթերի արդյունավետությունը և պահպանելու կիրառականները:

Դրական է, որ քուլեջի դասախոսներն ու ուսանողները, որպես անմիջական ներքին շահառուներ, մասնակցում են իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին՝ նպաստելով կայացված որոշումների թիրախայնությանը և առաջնայնությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՌԾ-ի կատարման հիմքում ընկած են քուլեջի ստորաբաժանումների տարեկան պլանները, միաժամանակ արձանագրում է, որ ՌԾ-ի իրականացմանը հետևելու համար ՄՈՒՀ-ն անհրաժեշտություն կունենա մշակելու վերջինիս իրականացման ժամանակացույց (համապատասխան գործողություններով, պատասխանատուներով, ժամկետներով, անհրաժեշտ ռեսուրսներով), ինչպես նաև ներդնելու արդյունավետության գնահատման որակական և քանակական ցուցանիշներ: Ժամանակացույցի առկայությունը կնպաստի նաև ստորաբաժանումների պլանավորման գործընթացների բարելավմանը և ՌԾ-ի հետ կապակցմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քուլեջում պլանավորվող և իրականացվող ցանկացած գործընթացի հիմքում արտաքին և ներքին ազդակներից ստացված արձագանքներն են, ինչի արդյունքում հնարավոր է դառնում ունենալ հաջողված փորձ և բարելավումներ: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման գործընթացները անհրաժեշտություն ունեն համակարգելու և վերլուծված տվյալների վերածելու, վերջինս կնպաստի ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացմանը:

Գովելի է, որ քուլեջը ներդրել է կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ, որոնք բազմազան են և քուլեջը դրանք համարում է իր կրթական ծրագրերի արդյունավետության արժանահավատ ցուցիչները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քուլեջը ռազմավարական նպատակներն իրականացնելու համար ունի համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ, կառավարման գործընթացը նպաստում է որակյալ կադրերի ներգրավմանը, առկա է կոլեգիալ կառավարման համակարգ, ներքին շահակիցները մասնակցում

են իրենց առնչվող որոշումների կայացմանը, միևնույն ժամանակ ղեկավար անձնակազմը քոլեջում վայելում է մեծ հարգանք և հեղինակություն, առկա է ֆինանսների տնօրինման հստակ և արդյունավետ քաղաքականություն, ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացները կանոնակարգված են, որոշումների կայացման գործընթացում հաշվի են առնվում ներքին և արտաքին գործոնները, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի թիվ 1 պետական տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է 5 միջին մասնագիտական՝ «Դերասանական արվեստ», «Ռեժիսուրա», «Պարի ուսուցում», «Շուկայաբանություն», «Հաշվապահական հաշվառում» և 3 նախնական մասնագիտական՝ «Խոհարարական գործ», «Ոսկերչություն», «Լուսանկարչական գործ» կրթական ծրագրերը: «Լուսանկարչական գործ» կրթական ծրագիրը ներդրվել է 2023-2024 ուստարվանից: Վերջինիս ներդրման համար հիմք են հանդիսացել առկա նյութատեխնիկական բազան, արտաքին ազդակներից ստացած բանավոր արձագանքները և «Ռեժիսուրա» ՄԿԾ-ում առկա նմանատիպ մասնագիտական մոդուլը, դրա դասավանդման փորձը: 2022-2023 ուստարվանից «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ ընդունելություն չի իրականացվում՝ հաշվի առնելով ապագայում վերջինիս պահանջարկի նվազման միտումը և այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից մեծ թվով շրջանավարտների թողարկումը:

Ուսանողների քանակով առաջատար են «Դերասանական արվեստ», «Պարի ուսուցում» և «Խոհարարական գործ» մասնագիտությունները, իսկ աշխատանքի ընդունման ցուցանիշներով առաջատար են «Խոհարարական գործ» և «Դերասանական արվեստ» ՄԿԾ-ների ուսանողները և շրջանավարտները: Քոլեջում իրականացվող 8 կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, վերջնարդյունքները համապատասխանում են ՈԱԾ-ի բնութագրիչներին և բոլորի հիմքում ընկած են Պետական կրթական չափորոշիչները: 2023 թվականի հոկտեմբերի ամսվա դրությամբ 8 կրթական ծրագրով քոլեջում ուսումնառում է 436 ուսանող:

Վերանայված կամ նոր ներդրված ՄԿԾ-ները քննարկվում են ամբիոններում, ուսումնամեթոդական խորհրդում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը 2014թ. «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» մասնագիտությունների գծով առաջարկությունների փաթեթ է ներկայացրել ՄԿՈՒԶԱԿ ապագայում վերանայվող ՊԿԶ-ներում փոփոխությունները ներառելու համար: Բացի այդ, մի քանի դասախոս 2021 թվականին մասնակցել է «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» ՊԿԶ-ների վերանայմանը, որի արդյունքում առաջարկությունների

փաթեթում ներառած բոլոր փոփոխությունները տեղ են գտել վերանայված չափորոշիչներում: Քոլեջի առաջարկությամբ «Ռեժիսուրա» մասնագիտության վերանայման արդյունքում ուսպլանից հանվել է «Ձանգվածային միջոցառումների ռեժիսուրա» մոդուլը (հիմք է ընդունվել մասնագետների կարծիքը՝ ոլորտում զանգվածային միջոցառումների քիչ տարածվածությունը) և ներդրվել նոր մոդուլ՝ «Ինքնաբերականություն»: Մինչ վերանայումը ամբիոնների որոշումներով այդ առաջարկություններում ներառված մոդուլները դասավանդվել են պահուստային ժամերի հաշվին:

«Դերասանական արվեստ» ՄԿԾ-ում քոլեջի նախաձեռնությամբ ավելացել է «Հայ գրականությունը թատրոնում և կինոյում», ինչպես նաև «Համաշխարհային գրականությունը թատրոնում և կինոյում» մոդուլները, վերջիններիս ավելացմանը նպատակը եղել է ուսանողներին խրախուսելու առավել շատ ընթերցել հայկական և արտասահմանյան գրականություն: Քոլեջի առաջադրմամբ այս մոդուլները ներառվել են նաև ՊԿԶ-ներում:

ՄԿԾ-ների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջիններս մանրամասն նկարագրված են ըստ կատարման չափանիշների, ակնկալվող վերջնարդյունքների, առկա են ծրագրային մանրամասներ, գնահատման միջոց, մեթոդաբանություն և ռեսուրսներ: Ուսումնասիրվող երեք կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առանձնացված են ժամեր ընտրովի և նախասիրական առարկաների համար: «Դերասանական արվեստ» ՄԿԾ-ում նախասիրական առարկա է «Ընտանեկան կյանքի նախապատրաստումը», «Ռեժիսուրայում»՝ «Ընդհանուր հոգեբանություն» և «Ընտանեկան հարաբերությունների հիմունքներ» առարկանները, իսկ «Խոհարարական գործում»՝ «Աշխատանքային հոգեբանություն» և «Էթիկայի հիմունքներ» առարկանները: Ուսումնասիրվող ՄԿԾ-ների ուսպլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական: «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» մասնագիտությունների արտադրական և նախաավարտական պրակտիկաներն անցկացվում են թատրոններում, բուսաբանական այգում (նկարահանումներ իրականացնելու նպատակով), հեռուստատեսությունում, «Խոհարարական գործ» մասնագիտությանը՝ տարբեր ռեստորաններում: Առկա են պրակտիկայի ծրագրեր, որոնցում մանրամասն նկարագրված է պրակտիկայի ընթացքում ուսանողի կողմից կատարվող գործողությունների հաջորդականությունը: Պրակտիկայի ավարտին ուսանողները լրացնում են օրագրեր, գործատուները նրանց տալիս են արտադրական բնութագրեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օրինակ՝ «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները իրենց պրակտիկաներն անցկացնում են տարբեր ռեստորաններում և հնարավորություն են ունենում համեմատել տարբեր երկրների ազգային խոհանոցների առանձնահատկությունները: «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» մասնագիտության պրակտիկաներն անցկացվում են հիմնականում Երևանի պատանի հանդեսատեսի թատրոնում, որտեղ ուսանողները ներկա են գնտվում բեմադրությունների փորձերին, դիտում են ներկայացումներ և իրականացնում վերլուծություններ, քննարկումներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները դասապրոցեսի ընթացքում հիմնականում կիրառում են դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ մեթոդներ: Ուսումնասիրվող մասնագիտություններում գործնական և տեսական պարապմունքները դասավանդող պրակտիկ մասնագետներն իրենց փորձով աջակցում են ուսանողներին ավելի լավ յուրացնելու նոր տեսական նյութը և դա կարողությունների և հմտությունների վերածելու: Դասի ընթացքում հաճախ ուսանողներին հանձնարարում են խմբային աշխատանքներ: «Դերասանական արվեստ» մասնագիտության ուսանողները համատեղ ջանքերով գրում են պիեսներ (օրինակ՝ «Փամփուշտների վալս»), վերջիններս կարող են դառնալ բեմադրություններ:

«Ռեժիսուրա» մասնագիտության ուսանողները գրում են սցենարներ, իրականացնում բեմադրություններ, նկարահանումներ: Դասախոսները հիմնականում կիրառում են փորձելով սովորելու մեթոդը, օրինակ՝ լուսավորման տարբեր անկյուններից ուսանողները լուսանկարում են և գտնում նկարների տարբերություններն ու վերլուծում դրանք: «Կինոյի պատմություն» մոդուլի շրջանակներում հատուկ կինոդիտման համար ստեղծված լսարանում ուսանողները դիտում են ֆիլմեր և փորձում վերլուծել, տանը նույնպես հանձնարարվում է դիտել դասական ֆիլմեր, որոնք ապա լսարանում քննարկվում են: Թատերական ներկայացումներին ու դասերին մասնակցությունը ցույց տվեց, որ դասախոսները կիրառում են բազմազան ինտերակտիվ մեթոդներ վերջնարդյունքին հասնելու նպատակով:

«Խոհարարական գործ» ծրագրում ուսանողները տեսական ժամերին ուսումնասիրում են հումքի պահպանման պայմանները, մակնշավորման ձևերը, փաստաթղթերի լրացումը, հումքի մշակումների ջերմաստիճանները և այլն: Բացի տեսական ժամերից, յուրաքանչյուր շաբաթ ուսանողներն ունենում են նաև արտադրական ուսուցում (առաջին կուրսում շաբաթական մեկ անգամ, իսկ երկրորդ և երրորդ կուրսերում շաբաթական երկու անգամ), որի ընթացքում ուսանողները պատրաստում են տարբեր ճաշատեսակներ, իրականացնում չափաբաժինների չափումներ: ՄՈՒՀ-ում առկա է պարտադիր պատաստվող կերակրացանկ, որով վարպետներն առաջնորդվում են տարբեր կուրսերում ուսանողներին առաջադրանքներ տրամադրելիս: Ուտեստների պատրաստման համար առկա են նաև արտադրական քարտեր, որտեղ ներկայացված են, թե ինչպիսի քայլերով ուսանողները կարող են հասնել վերջնական արդյունքին:

Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսներն իրենց ուսումնառության նյութերը տեղադրում են <https://moodle.yerevancollege.am/> հարթակում, ուսանողները գրանցված են հարթակում և հնարավորություն ունեն դրանք վերցնել այնտեղից:

Քոլեջում ընթացիկ գնահատումն իրականացվում է 10 բալային համակարգով՝ ուսումնառության ընթացքում, կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին և ուսումնառության ավարտին՝ ամփոփիչ ավարտական ատեստավորմամբ: Քոլեջը մշակել է ակադեմիական ազնվության պահպանման կարգ, որով սահմանվում են ակադեմիական ազնվության նպատակները, էլակետային հասկացությունները, ազնվության պահպանման կարևորությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ակադեմիական ազնվությունը քոլեջը փորձում է ապահովել անհատական տրվող առաջադրանքների միջոցով, օրինակ՝ տարբեր կերպարների ուսումնասիրություն, դրանց վերաբերյալ սեփական դիրքորոշումների արտահայտում և այլն: Իսկ ինչ վերաբերում է բողոքարկումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ նման դեպքեր չեն արձանագրվել:

«Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» ՄԿԾ-ների շրջանակներում դասախոսները գնահատումն իրականացնում են անհատական և գործնական առաջադրանքների, բանավոր հարցման, գրավոր գնահատման՝ թեստերի միջոցով: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսումնասիրվող ՄԿԾ-ների մասնագիտական մոդուլների գնահատման թերթիկներում առկա են ինչպես տեսական գիտելիքները ստուգող հարցեր՝ ճիշտ պատասխանը նշելու տարբերակով, այնպես էլ գործնական հմտությունները ստուգող հարցեր կամ առաջադրանքներ: Մինևնույն ժամանակ պարզ դարձավ, որ ոչ մոդուլային ծրագրերում, ոչ գնահատման կարգում հստակեցված չեն գնահատման չափանիշները՝ դրական գնահատականի համար անհրաժեշտ նվազագույն և ամենաբարձր գնահատականի առավելագույն պահանջները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Դերասանական արվեստ» մասնագիտության պետական ամփոփիչ ատեստավորումը դիպլոմային աշխատանք է, «Ռեժիսուրա»

մասնագիտությանը՝ պետական քննություն և դիպլոմային աշխատանք, իսկ «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները բացի պետական քննությունից հենց տեղում պատրաստում են առաջադրված ուտեստները: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ամփոփիչ ատեստավորման գնահատման համար չկա միասնական մոտեցում, տարբեր մասնագիտությունների գծով ամփոփագրերում առկա են 10 միավորային և 20 միավորային գնահատում, այնինչ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար մշակված պետական ամփոփիչ ատեստավորման կարգը ենթադրում է որակական գնահատում՝ բավարար, լավ, գերազանց:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Խոհարարական գործ» և «Ոսկերչություն» մասնագիտությունների արտադրական ուսուցումը արդյունավետ դարձնելու համար խմբերը բաժանվում են երկու մասի՝ յուրաքանչյուր խմբում ներառելով մինչև 10-12 ուսանող: Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի վայրերում հենց պրակտիկայի օրագրերում 10 բալային համակարգով: Գնահատականի համար հաշվի են առնվում ուսանողների հաճախումները, տեսական գիտելիքների գործնական կիրառումը, կազմակերպչական ջիղը:

Հայաստանյան քոլեջների հետ ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն քոլեջը որպես այդպիսին չի իրականացրել՝ ուսումնասիրելու հաջողված դասավանդման մեթոդները, ուսանողներին տրամադրվող առաջադրանքները, գնահատման չափանիշները և այլն: Ինչ վերաբերում է միջազգային շուկայում այլ ՄԿԾ-ների հետ համեմատական վերլուծություններին, ապա անհրաժեշտ է նշել, որ 2018թ. «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները դասախոսի հետ միասին եղել են Լեհաստանում, որտեղ բանավոր քննարկումների միջոցով ուսումնասիրել են նմանատիպ մասնագիտության փորձը և ներկայացրել իրենցը: ՄՈՒՀ-ի ներկայացուցիչները միջազգային ծրագրի շրջանակներում եղել է նաև Ֆրանսիայում, որտեղ ուսանողները և դասախոսները ուսումնասիրել են ֆրանսիական խոհանոցը և իրենց հետ բերել նոր բաղադրատոմսեր: Ուսանողական և դասախոսական կազմի համար շարժունության ծրագրեր առկա չեն:

ՄԿԾ-ների ընթացիկ մշտադիտարկումը տեղի է ունենում ամեն տարի ըստ հաստատված ընթացակարգի՝ ամբիոնի նիստերի և քննարկումների միջոցով, արդյունքում տեղի են ունենում առաջադրանքների, մեթոդների վերանայումներ և ուսումնական գործընթացում ներառում են դասավանդման նոր մոտեցումներ և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում իրականացվող 8 կրթական ծրագրերով պատրաստվում են կանոնադրական նպատակներին համապատասխան, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետներ: Գնահատելի է, որ նոր կրթական ծրագրի ներդրման համար հիմք են հանդիսացել աշխատաշուկայի ուսումնասիրությունը, նախկին փորձառությունը և նյութատեխնիկական բազան: Քոլեջն արագ արձագանքում է նաև ոչ արդիական մասնագիտությունները ավելի պահանջվածներով փոխարինելու աշխատաշուկայի պահանջներին:

Դրական է, որ բոլոր կրթական ծրագրերի ուսալաններում ուսանողների ընդհանուր զարգացվածությանը նպաստելու համար առանձնացված են նախասիրական և ընտրովի ժամեր:

Գնահատելի է, որ պրակտիկայի վայրերը բազմազան են, ինչը թույլ է տալիս ուսանողներին ուսումնասիրել տարբեր մոտեցումներ, ականատես լինել տարբեր տաղանդավոր դերասանների

խաղին, ռեժիսորների աշխատանքին, տարբերվող ռեսուրսանների խոհարարների վարպետությանը, մեթոդաբանությանը:

Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ դասախոսների կողմից կիրառվող մեթոդները ուսանողակենտրոն են, բացի այդ թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքների հիմնական մասը իրականացնում են պրակտիկ մասագետները, ինչի արդյունքում հնարավոր է դառնում ուսանողների մոտ ձևավորել աշխատաշուկայի կողմից պահանջված հմտությունները: Ուսանողներին տրվող առաջադրանքները հնարավորություն են տալիս իրականացնել կարողությունների գնահատում (բեմականացում, ուտեստների պատրաստում և այլն): Հատկանշական է, որ դասապրոցեսի ընթացքում բացի ուսումնառության նյութ տրամադրելուց, դասախոսները ամբողջ մոդուլի նյութերը և հանձնարարությունները տեղադրում են moodle հարթակում, արդյունքում ուսանողները կարողանում են ցանկացած ժամանակ ուսումնասիրել նյութը, բացի այդ միաժամանակ լուծվում է բնապահպանական և ռեսուրսախնայողության խնդիր: Նշված կրթական ծրագրերում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդների զանազանությունը, ինչպես նաև փորձագիտական խմբին ընձեռված հնարավորությունը, այն է՝ երկու տարբեր թատերական ներկայացումների դիտումները, փաստում են, որ ուսումնական աշխատանքները կազմակերպելով համակարգված, միևնույն ժամանակ՝ ազատ ստեղծագործական միջավայրում, Քոլեջը կարողանում է ապահովել մասնագիտական համապարփակ հմտություններ սովորողների համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գնահատումն իրականացվում է ըստ ընդունված կարգի, առկա է ընթացիկ և վերջնական գնահատում, գովելի է, որ ուսանողների կողմից ձեռքբերված հմտություններն ու կարողությունները ստուգվում են տարբեր միջոցներով՝ դերային խաղ, բանավոր հարցում, անհատական և խմբային առաջադրանքներ, ինչը հնարավորություն է տալիս ապահովել վերջնարդյունքահենք գնահատում: Փորձագիտական խումբը միայն նշում է, որ Քոլեջը կարիք ունի ներդնելու գնահատման հստակեցված չափանիշներ թե՛ ընթացիկ, թե՛ ամփոփիչ և թե՛ պրակտիկաների գնահատման համար, որը կապահովի առավել հստակ և օբյեկտիվ գնահատում:

Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ երեք մասնագիտության ամփոփիչ ատեստավորման ժամանակ բացի տեսական հարցերից, ստուգվում են ուսանողների հմտությունները, անհատական աշխատանքները, որոնք գնահատվում են ոլորտի գործատու մասնագետների կողմից, արդյունքում հենց ամփոփիչ ատեստավորման ժամանակ այքի ընկած շրջանավարտները ստանում են աշխատանքի առաջարկ:

Փորձագիտական խումբը կարևորում է կրթական ծրագրերի համեմատական վերլուծության ուղղությամբ քոլեջի ունեցած փորձառությունը, ինչի շարունակականությունը կարող է ապահովել դասախոսների և ուսանողների միջազգային շարժունությանը:

Գովելի է, որ քոլեջում իրականացվել են ՄԿԾ-ների որոշ բարելավումներ և հատկանշական է, որ դրանց մասնակցել են քոլեջի պրակտիկ մասնագետները: Գնահատելի է, որ նման դեպքերում քոլեջը արագ արձագանքում է՝ չսպասելով ՊԿԶ-ների վերանայմանը. վերջինս մատնանշում է քոլեջի նախաձեռնողականությունը շուկայի արագ փոփոխվող միջավայրին համապատասխան կրթություն տրամադրելու ձգտումը :

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն իրականացնում է իր առաքելությանն ու աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ներ, ակնկալվող վերջնարդյունքներն համապատասխանում են ՈԱԾ-ին, պրակտիկաների բազաները

ըստ մասնագիտությունների բազմազանեցված են, առկա են ՄԿԾ-ների բարելավման օրինակներ, շրջանավարտների մեծ մասն աշխատում են իրենց մասնագիտությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածման և ուսանողների հավաքագրման նպատակով Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն իրականացնում է հետևյալ աշխատանքները՝ ընդունելության վերաբերյալ հայտարարությունների տարածում քոլեջի ֆեյսբուքյան էջում, այցեր դպրոցներ և կրթական ծրագրերի ներկայացում աշակերտներին և այլն: Մասնագիտական կողմնորոշման նպատակով աշակերտներին հնարավորություն է տրվում նաև ներկա գտնվելու Քոլեջում իրականացվող գործնական դասընթացներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մեծ մասն ընդունվել է քոլեջ, քանի որ լսել են դրական արձագանքներ քոլեջի շրջանավարտների կողմից, ինչպես նաև քոլեջի մասին տեղեկացել են համացանցից:

Ինչպես ՀՀ բոլոր միջին մասնագիտական ուսումնական բոլոր հաստատություններում, այնպես էլ Քոլեջում ընդունելությունն իրականացվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով: Ուսանողների ընդունելությունն իրականացվում է լիազոր մարմնի կողմից հաստատված մրցութային կարգով՝ հիմնական կրթության վկայականի գնահատականների հիման վրա, բացառություն են կազմում միայն «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» կրթական ծրագրերը, այստեղ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ՝ առակ, արձակ, բանաստեղծություն, էսյուդ, երգ (դիմորդի ցանկությամբ): Անհրաժեշտ է նշել, որ ընդունելության քննությունների վերաբերյալ հրապարակումներ տեղի չեն ունենում, դրանց բովանդակության և առաջադրանքների հստակության մասին դիմորդը կարող է տեղեկանալ միայն Քոլեջից բանավոր տարբերակով:

Քոլեջում կրթություն է ստանում 438 ուսանող, որոնցից՝ 97-ը վճարովի, իսկ 341-ը՝ անվճար համակարգերում: 2020-2021 ուստարում քոլեջում կրթություն է ստացել 505 ուսանող, 2021-2022 ուստարում՝ 472 ուսանող, իսկ 2022-2023՝ 451 ուսանող: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների նվազման պատճառ է հիմնականում արտագաղթը և ուսանողների անվճարունակությունը: Անհրաժեշտ է նշել, որ այս ուղղությամբ դեռևս լուրջ հետազոտություններ և վերլուծություններ չեն իրականացվել: Բոլոր կրթական ծրագրերի համար վարձավճարները նույնն են՝ կազմելով 220.000 դրամ: Քոլեջում գործում է նաև ուսման վարձի զեղչի համակարգ՝ սկսած 10 տոկոս փոխհատուցումից մինչև 100 տոկոս (Արցախից եկած ուսանողների համար): Կրթությունն անվճար է նաև օրենքներով սահմանված արտոնություն (հատուկ խնամքի կարիք

ունեցող, ծնողագուրկ) ունեցող ուսանողների համար, նման պայմաններով սովորող ուսանողների քանակը 7-ն է:

Ուսանողների կարիքների վերհանման նպատակով բոլոր կուրսերն ունեն կուրսի ղեկավար, ով ուսանողներին տրամադրում է ընթացիկ աջակցություն՝ վարձավճարների և գեղչերի տրամադրման վերաբերյալ տեղեկավորության, կարգերի, ընթացակարգերի տրամադրում, բացակայությունների պարագայում ուսանողների հետ կապի հաստատում և այլն: Կուրսղեկները քոլեջի դասախոսներն են: Ուսանողների կարիքների վերհանման մյուս մեխանիզմներն են «Ուրիշ ուսանողական խորհուրդը» և «Առաջարկությունների ծառը»: Ուսանողական խորհուրդը վերակազմավորվել է 2023թ. հունիս ամսից: Ուսանողները ծառի վրա հնարավորություն ունեն փակցնելու իրենց ցանկությունները և առաջարկությունները, ինչպիսին են՝ շարունակել քոլեջում իրականացվող վարպետաց դասերը, իրականացնել միջկուրսային դասընթացներ, կազմակերպել սպորտային օլիմպիադաներ և այլն: Փակցված թերթիկներն ուսումնասիրվում են Քոլեջի տնօրենի, Ուսանողական խորհրդի, Որակի ապահովման պատասխանատուի կողմից, դրանք քննարկվում են և վերջիններիս վերաբերյալ կայացվում են որոշումներ. ուսանողների առաջարկները հիմնականում հաշվի են առնվում:

Ուսանողներին խորհրդատվություններ տրամադրելու նպատակով բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առկա են նաև խորհրդատվական ժամեր, որոնք նախատեսված են քննություններից առաջ ուսանողներին խորհրդատվություն տրամադրելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները դասախոսական կազմից, վարպետներից կարող են ստանալ ընթացիկ խորհրդատվություններ նաև այդ ժամերից դուրս: Խորհրդատվությունները հիմնականում վերաբերում են ընթացիկ առաջադրանքների իրականացմանը: Իսկ ինչ վերաբերում է լրացուցիչ պարապմունքներին, անհրաժեշտ է նշել, որ քոլեջը կազմակերպում է ուսանողների համար տարբեր վարպետաց դասեր «Խոհարարական գործ», «Պարի ուսուցում» և այլ ծրագրերի շրջանակներում: Ուլտրաի հաջողած մասնագետներն ուսանողների հետ կիսվում են իրենց փորձով և հմտություններով: Վարպետաց դասերին կարող են մասնակցել ոչ միայն տվյալ մասնագիտության ուսանողները, այլև այլ մասնագիտություններից ուսանողներ. նրանց համար նույնպես մուտքն ազատ է:

Քոլեջում սահմանված չէ վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են ցանկացած պահին դիմելու տնօրենին և վարչական այլ աշխատակիցներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց հարցերով հիմնականում դիմում են տնօրենին, վերջինս փորձում է աջակցել ուսանողներին ուսանողական միջավայրի բարելավման և այլ հարցերում, օրինակ՝ քոլեջի թատրոնի լուսավորության բարեկարգման, բուֆետի բացման, ներկայացումների կազմակերպման և այլ: Անհրաժեշտ է նշել, որ Քոլեջի տնօրենը ուսանողների շրջանում վայելում է մեծ հարգանք և վստահություն:

Ուսանողների կարիերային աջակցելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է Կարիերայի կենտրոնը, որի աշխատանքները կազմակերպվում է տարեկան պլանի հիման վրա: Կենտրոնն աջակցում է ուսանողներին գրելու մրցունակ CV-ներ, մոտիվացիոն նամակներ, աջակցում է ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, կազմակերպում է այցեր տարբեր բուհեր և այլն: Կենտրոնի գործառնություններից է նաև շրջանավարտների հետ հետադարձ կապի պահպանումը և վերջիններիս զբաղվածության տվյալների հավաքագրումը: Ներկայացված տվյալների համաձայն՝ 2022թթ. շրջանավարտների շուրջ 59%-ը կարողացել է իրացվել աշխատաշուկայում (33%-ն իր մասնագիտությամբ, 26% այլ մասնագիտությամբ), 2021թ.՝ 48%-ը (27%-ն իր մասնագիտությամբ,

21%-ն այլ մասնագիտությամբ), իսկ 2020թ.՝ 22%-ը (6%-ն իր մասնագիտությամբ, 16%-ն այլ մասնագիտությամբ): Անհրաժեշտ է նշել, որ աշխատանքի ընդունման տեսանկյունից ամենահաջողված կրթական ծրագիրը «Խոհարարական գործն է»:

Քոլեջի շրջանավարտներն ինչպես կրթական ծրագրերի շրջանակներում, այնպես էլ դրանցից դուրս իրականացնում են մի շարք ստեղծագործական և վերլուծական աշխատանքներ: «Խոհարարական գործ» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են տարբեր խոհանոցներ և ուտեստներ պատրաստելիս կամ ձևավորելիս ներդնում են իրենց գաղափարները: «Ոսկերչություն» կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են տարբեր զարդանախշեր, ծանոթանում են վերջիններիս պատմությանը, հետազայում կիրառելի ստացված գիտելիքներն իրենց աշխատանքներում: Անհրաժեշտ է նշել, որ հետազոտական և վերլուծական աշխատանքի օրինակներ ներդրված են բոլոր ծրագրերում:

ՄՈՒՀ-ում գործում է նաև «Ուրիշ» ուսանողական թատրոնը, որտեղ ներգրավված են ուսանողներ տարբեր կրթական ծրագրերից՝ «Դերասանական արվեստ», «Պարի ուսուցում», «Ռեժիսուրա», նույնիսկ՝ «Խոհարարական գործ»: Թատրոնի շրջանակներում ուսանողները բեմականացնում են սեփական կամ հայտնի ստեղծագործողների աշխատանքները: Այն հարթակ է մասնագիտական կարողությունները ցուցադրելու, թիմում համագործակցելու և ստեղծագործելու համար: Ուսանողները զբաղվում են նաև ներկայացման համար անհրաժեշտ՝ բեմի ձևավորման ապահովմամբ: Օրինակ, փորձագիտական այցի ընթացքում ուսանողները «Փարիզի Աստվածամոր տաճարը» բեմականացնելու համար սեփական գաղափարներով և ջանքերով պատրաստում էին տաճարը: Ներկայացումներին որպես հանդիսատես ներկա են գտնվում ինչպես արդեն հայտնի դերասաններ, այնպես էլ ուսանողների հարազատները և դպրոցներից հրավիրված աշակերտներ, մանկավարժներ և այլք: Քոլեջի ուսանողական թատերական ներկայացումների ավարտին իրականացվում են հարցումներ, որի միջոցով ուսումնասիրում են հանդիսատեսի՝ շահակիցների կարծիքը ներկայացման վերաբերյալ՝ ռեժիսորական աշխատանք, նկարչական և երաժշտական ձևավորում, դերասանական խաղ և այլն: Ներկայացումները նաև հարթակ են ուսանողների համար գործող դերասաններից և հանդիսատեսից հետադարձ կապ (ներկայացման վերջում հանդիսատեսին բաժանվում են գնահատման թերթիկներ) ստանալու համար: Քոլեջ այցելած հյուրերի՝ արվեստի ներկայացուցիչների հետ, ուսանողների ուժերով նկարահանվում են նաև հարցազրույցներ, խնդիրներ վերհանելու նպատակով: Տեսանյութերը տեղեկրվում են Քոլեջի YouTube-յան էջում, որտեղ նույնպես հնարավորություն կա մեկնաբանություններ թողնելու: Ներկայացումները քննարկվում և վերլուծվում են տնօրենության և դասախոսական կազմի հետ:

Քոլեջի ներսում կազմակերպվում են նաև միջկուրսային մրցույթներ, 1-ին և 2-րդ հորիզոնականները զբաղեցրած ուսանողներին տրամադրվում են խրախուսումներ կրթաթոշակի բարձրացման (անվճար համակարգում սովորելու դեպքում) կամ զեղչի տրամադման (վճարովի համակարգում սովորելու դեպքում) տեսքով:

Ուսանողներին ոգեշնչելու և մոտիվացնելու նպատակով քոլեջում կազմակերպվում են նաև մրցանակաբաշխություններ արվեստի ոլորտի ուսանողների միջև: Նոմինացիաներն են՝ Լավագույն ներկայացում, Լավագույն ուսանող-բեմադրիչ, Լավագույն դերասան/դերասանուհի, Լավագույն երաժշտական ձևավորում, Լավագույն կարճամետրաժ ֆիլմ, Հատուկ մրցանակ և այլն: Հաղթողները պարգևատրվում են մրցանակներով:

Ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է: Խորհուրդը սերտորեն համագործակցում է տնօրենի, տնօենի տեղակալների, Կարիերայի կենտրոնի պատասխանատուի հետ: Ուսանողների կարիքները

հիմնականում բացահայտվում են կուրսերի ավագների միջոցով: Ներկայիս Խորհուրդը նոր է ձևավորվել և դեռևս շատ աշխատանքներ չի հասցրել իրականացնել: ՈՒԽ-ն հաշվետու է տնօրենին: Իր աշխատանքները կազմակերպելու համար խորհուրդը դիմել է տնօրենին՝ սեփական աշխատասենյակ ունենալու հարցով, արդյունքում կառույցին տրամադրվել է սենյակ: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կառույցը հատուկ ֆինանսավորում չի ստանում, սակայն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել ղեկավարությանը միջոցառումների կազմակերպման համար աջակցություն ստանալու նպատակով: Օրինակ՝ Ջատկի տոնի կազմակերպման համար ստացել է ֆինանսական աջակցություն անհրաժեշտ մթերքներ ձեռք բերելու համար:

Ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման աշխատանքներով զբաղվում են նաև կուրսղեկները, դասղեկները և վարպետները: Առկա է նաև «Քոլեջի ուսանողների հիմնական պարտավորությունները և իրավունքներ» փաստաթուղթը, որը մանրամասնորեն տրամադրում է տեղեկատվություն ուսանողների դերի մասին:

Ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները չեն գնահատվում: Ինչ վերաբերում է կրթական և այլ ծառայություններին, ապա անհրաժեշտ է նշել, որ կազմակերպվում են հարցումներ կրթական միջավայրը և ռեսուրսային ապահովվածությունը գնահատելու համար:

Դատողություններ: Դրական է, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ, որոնք մոտիվացնում են դիմորդներին դառնալու քոլեջի ուսանողները: Կարևոր ցուցանիշներից է այն, որ շրջանավարտները դառնում են լավագույն գովազդը քոլեջի համար, որը նպաստում է շահակիցների վստահության բարձրացմանը քոլեջի նակատմամբ:

Փորձագիտական խումբը նշում է, որ «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» կրթական ծրագրերի ընդունելության քննության անցկացման շրջանակներում ՄՈՒՀ-ը կարիք ունի ներդնելու հստակ սահմանված պահանջներ, բովանդակություն, գնահատման չափանիշներ, որոնք նախապես կիրառարակվեն դիմորդների համար՝ ապահովելով գործընթացների թափանիկությունը:

Մինևույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների նվազման պատճառներն առավել մանրամասն և հստակ գործիքակազմով ու մեթոդաբանությամբ ուսումնասիրելու կարիք ունեն, չափելի տվյալները հնարավորություն կընձեռեն վերջիններիս ուղղությամբ հաղթահարման քայլերի մշակմանը:

Դրական է, որ Քոլեջում գործում է զեղչային համակարգ և ուսանողների առաջադիմությունն ու ակտիվությունը գնահատող մեխանիզմներ, որը նպաստում է ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը և ուսանողական ակտիվ միջավայրի ձևավորմանը: Գովելի է նաև, որ քոլեջում գործում է ռոտացիայի հնարավորություն, որը թույլ է տալիս լավ առաջադիմությամբ վճարովի համակարգում սովորող ուսանողներին շարունակել ուսուցումը արդեն անվճար համակարգում:

Ուսանողների կարիքների վերհանման և նրանց աջակցություն տրամադրելու համար Քոլեջում գործում են մի շարք մեխանիզմներ, որոնք նպաստում են ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը: Ինչ վերաբերում է ուսանողներին տրամադրվող խորհրդատվություններին և լրացուցիչ պարապմունքներին, ապա դրական է, որ ուսանողներն հնարավորություն ունեն խորհրդատվություններ ստանալ իրենց դասախոսական կազմից դասընթացներին վերաբերող հարցերի վերաբերյալ: ՄՈՒՀ-ը նախաձեռնում և կազմակերպում է վարպետաց դասեր, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին հաղորդակցվելու ոլորտի մասնագետների հետ,

տեսնելու աշխատանքի նոր մոտեցումներ, որը ոգեշնչում է վերջիններիս առավել լրջորեն մոտենալ իրենց մասնագիտությանը և աշխատանքին: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջը կարող է նախաձեռնող լինել և լրացուցիչ օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն) պարապմունքներ կազմակերպել ուսանողների համար, որը հիմքեր կստեղծի նաև ուսանողների շարժունությանը նպաստելու համար:

Դրական է, որ քոլեջում ակտիվորեն իր գործունեությունն է ծավալում Կարիերայի կենտրոնը, որը նպաստում է ուսանողների աշխատաշուկային պատրաստվելուն: Միևնույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ մինչև 2030թ. կրթության ռազմավարությունը (որտեղ նշվում է շրջանավարտների մինչև 90%-ի աշխատանք գտնելու կարևորությունը), փորձագիտական խումբն արձագանքում է, որ շրջավարտների զբաղվածության ցուցանիշները դեռևս այդքան էլ գոհացնող չեն: Փորձագիտական խումբը գտնում է, որ Կարիերայի կենտրոնը կարող է առավել ամրապնդել իր հարաբերությունները գործատուների հետ, տարեցտարի մեծացնել (հստակ սահմանված ցուցիչներով) վերջիններիս շրջանակը՝ նպաստելով գործատուների բազայի/ցանցի ձևավորմանը: Միևնույն ժամանակ շրջանավարտների համար կարող է ստեղծվել հարթակ, որը կապահովի շրջանավարտի և գործատուի միջև կապի ձևավորմանը և աշխատանքային առաջարկների արագ արձագանքմանը: Վերջինս կարող է նպաստել շրջանավարտների իրացման ծավալների մեծացմանը:

Ուսանողների ստեղծագործական և հետազոտական կյանքում մեծ դերակատարություն ունի «Ուրիշ» թատրոնը, վերջինս ինքնատիպ հարթակ է իրացնելու սեփական գաղափարները: Հանդիսատես ունենալու և վերջիններից դրական արձագանք ստանալու ձգտումը ոգևորում է ուսանողներին ծավալելու առավել ակտիվ ստեղծագործական գործունեություն:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների շահերը ներկայացնող կառույց, որը սերտորեն համագործակցում է տնօրենության և դասախոսական կազմի հետ: Այն կարող է նպաստել ուսանողների կարիքների արագ վերհանմանը և դրանց լուծումներ գտնելու հնարավորության մեծացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում առկա են ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ, քոլեջը միտված է ուսանողների կրթական կարիքների վերհանմանը և արագ արձագանքմանը, ուսանողները հնարավորություն ունեն ստանալու խորհրդատվություններ և մասնակցելու վարպետաց դասերի, քոլեջի վարչական կազմն ակտիվ համագործակցում է ուսանողների հետ վերջիններիս կարիքների բացահայտման և լուծումներ գտնելու գործում, ուսանողներն իրականացնում են մի շարք հետազոտական և ստեղծագործական աշխատանքներ, ձևավորված է ուսանողակենտրոն միջավայր, փորձագիտական խումբը 4-րդ չափանիշը գնահատում է դրական:

Եզրակացություն: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քոլեջը հիմնական դասախոսական անձնակազմի ներգրավման նպատակով առաջնորդվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված մրցութային կարգով: Մրցույթն իրականացնում է այդ նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ բանավոր ձևով, նախապես կազմված հարցաշարով, որը պետք է ներառի դասավանդվող մոդուլի կամ առարկայի մասնագիտական և մանկավարժական հմտությունները գնահատող հարցեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարում մրցութային կարգով աշխատանքի է ընդունվել 2 դասախոս, որից 1-ը «Լուսանկարչություն» կրթական ծրագրի մասնագիտական մոդուլների, իսկ 2-րդը՝ «Պարավետի պատմություն», «Դասական պար», «Հայկական ժողովրդական պար» մոդուլների դասավանդման նպատակով: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր հարցատոմս բաղկացած է եղել 5 մասնագիտական հարցերից, սակայն մանկավարժական հմտությունները ստուգող հարցեր չեն տրվել դիմողներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023-2024 ուսումնական տարում քոլեջն ընդունել է նաև հասարակության հետ կապերի պատասխանատու (վերջինս վճարվում է արտաբյուջեի հաշվին) և պահեստապետ, ինչպես նաև 2 դասախոս համատեղության հիմունքներով: Անհրաժեշտ է նշել, որ նոր ընդունված կադրերը քոլեջի շրջանավարտներն են:

Ուսումնաօժանդակ կազմը աշխատանքի է ընդունվում ոչ մրցութային կարգով տնօրենի հրամանի համաձայն, այս դեպքում հաշվի է առնվում դիմողի կրթությունը և աշխատանքային փորձը, հատուկ ընթացակարգեր առկա չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարում քոլեջ ընդունված ուսումնաօժանդակ և վարչական աշխատողները (հասարակության հետ կապերի պատասխանատու, պահեստապետ) աշխատանքի առաջարկությունը ստացել են տնօրենության կողմից:

Դասախոսական կազմին ներկայացվող պահանջները հստակեցված են և համապատասխանում են ՊԿԶ-ով սահմանված պահանջներին, այն է՝ ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա համապատասխան միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, կամ տվյալ մասնագիտության բնագավառում մասնագիտական աշխատանքային փորձ: Դասախոսական անձնակազմի/արտադրական ուսուցման վարպետի համար քոլեջը մշակել է պաշտոնի նկարագիր, որը, սակայն, ընդհանրական է, արտահայտում է վերջիններիս պաշտոնական պարտականությունները, իրավունքները և պատասխանատվության շրջանակը, կոնկրետ կրթական ծրագրի, առարկայի/մոդուլի վերաբերյալ թիրախային, մասնագիտական ուղղվածության վերաբերյալ պահանջներ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագետների ընտրության ժամանակ քոլեջը կարևորում է դիմողի մասնագիտական աշխատանքային փորձը և բարձրագույն կրթությունը: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բոլոր դասախոսներն ունեն իրենց վարած մոդուլին/ առարկային համապատասխան որակավորում: 2023 թվականի հոկտեմբերի 3-ի դրությամբ քոլեջում դասավանդում է 55 դասախոս, որոնցից 16-ը պրակտիկ մասնագետներ են: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջի ղեկավարությունը կարևորում է մասնագետների մասնագիտական փորձառությունը:

Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քոլեջում դասախոսական անձնակազմի գնահատման մեխանիզմներից են դասալսումները և ուսանողների շրջանում իրականացվող հարցումները: Դասալսումների համար մշակել են ժամանակացույց, իրականացվում են տնօրենական դասալսումներ, ՈՆԱ ենթակառուցվածքի և ամբիոնների կողմից կազմակերպվող փոխադարձ դասալսումներ: Առկա են դասալսման թերթիկներ, որոնք լրացվում են դասալսողների կողմից: Վերջիններիս ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թերթիկներում առկա են դիտարկումներ և առաջարկություններ, օրինակ՝ նախքան նոր արդյունքին անցնելը ամրապնդել հինը, առաջադրանքները հանձնարարել առավել արդյունավետ մեթոդներ կիրառելով, կիրառել այնպիսի դասավանդման մեթոդներ, որոնց շնորհիվ առավել շատ ուսանողներ կգնահատվեն և կընդգրկվեն հարցմանը և այլն: Տնօրենական դասալսումները իրականացվում են ըստ նախապես հաստատված ժամանակացույցի, որոնց մասնակցում են տնօրենը, փոխտնօրենները և ՈՆԱ պատասխանատուն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսման արդյունքները հիմնականում քննարկվում են ամբիոններում և դրանց հիման վրա փորձառու դասախոսները հանդես են գալիս մեթոդական զեկուցումներով՝ «Ինչպես գրել դասի պլան», «Դասավանդման ժամանակակից մեթոդներ՝ քննարկման մեթոդ, դերային խաղ» և այլն:

ՈՆԱ ենթակառուցվածքի կողմից դասավանդողների դասավանդման որակի վերաբերյալ ուսանողների շրջանում իրականացվող հարցումները կատարվում են առաջին կիսամյակի ավարտից հետո, ուսանողները գնահատականի տեսքով (գերազանց, լավ, բավարար և անբավարար) գնահատում են դասախոսին, նրա կողմից տրամադրած նյութի հասանելիությունը, դասը մատուցելու պատշաճ ոճը, մասնագիտական խորքային գիտելիքները, դասաժամը արդյունավետ և նպատակային օգտագործումը և այլն: Հարցումների վերլուծությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ընդհանական են և ընկած չեն դասավանդողների գնահատման հիմքում: Հարցաշարերում տեղ գտած հարցերը և ընտրված մեթոդաբանությունը այդքան էլ խնդիր կամ լավագույն փորձ վերհանող չեն:

Ըստ 2023-2028թթ. զարգացման ռազմավարական ծրագրի՝ Քոլեջն իր զարգացմանը նպաստող հիմնախնդիր է սահմանել դասախոսների պարբերական վերապատրաստումները, ժամանակակից և բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծումը: Այս ուղղությամբ քոլեջն իրականացնում է ներքին վերապատրաստումներ, առկա է մեթոդական զեկույցներ ներկայացնելու մշակույթը՝ երեք ուսումնական տարվա կտրվածքով մեթոդական զեկուցումների պլան-ժամանակացույցը, կատարողներով: Չեկուցումների թեմաները տարաբնույթ են, սկսած սկսնակ դասավանդողներին մեթոդական ցուցումներ տրամադրելուց մինչև դասի պլանավորումը և ժամանակակից դասավանդման մեթոդները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների շրջանում իրականացված հարցումների արդյունքում (դասախոսների հիմնական մասը չի տիրապետել անգլերենին կամ ունի ոչ բավարար գիտելիքներ) նախատեսել են հոկտեմբեր ամսին կազմակերպել ներքին վերապատրաստումներ օտար լեզվից:

Սկսնակ դասախոսներին տրամադրվում է մենթորական աջակցություն ամբիոնի վարիչների և փորձառու մանկավարժների կողմից՝ մոդուլների կազմման, դասի պլան գրելու, դասավանդման և ուսումնառության մեթոդ ընտրելու ուղղությամբ:

Քոլեջի դասախոսները ամեն տարի մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող մեթոդական վերապատրաստումներին: Մասնագիտական վերապատրաստումների քոլեջի դասախոսները հիմնականում չեն մասնակցել: «Խոհարարական գործ» մասնագիտության դասախոսների համար Ֆրանսիայից ժամանած խոհարարը անցկացրել է վարպետաց դաս:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քուլեջն իր 2022 և 2023 թվականների տարեկան նախահաշվով որոշակի ֆինանսական միջոցներ է նախատեսել մասնագիտական վերապատրաստումների համար, սակայն ծախսերի հաշվետվությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միայն կադրերի տեսուչն է մասնակցել «Գործք ՄՊԸ» -ի կողմից կազմակերպված դասընթացին: Պարզվեց նաև, որ մասնագիտական վերապատրաստումների կարիք առավել շատ ունեն «Խոհարարական գործ», «Ոսկերչություն» և «Շուկայաբանություն» մասնագիտությունների դասավանդողները: Մյուս մասնագիտությունների գծով առկա է փորձի փոխանակման, աշխատանքային ակտիվ միջավայրի դիտարկման դրական օրինակներ (օրինակ՝ դերասանների և դեժիսորների մոտ):

Ինչ վերաբերում է դասախոսական կազմի կայունությանը, անհրաժեշտ է նշել, որ 2018-2023 թվականներին դասավանդողների թիվը ավելացել է երիտասարդ կադրերով, միջին տարիքը 30-50-ն է: Կադրերի բարձր տարիք (60-ից բարձր) նկատելի է միայն վարպետների շրջանում: Դասախոսական կազմի երիտասարդացումը քուլեջի ղեկավար կազմի կողմից դիտարկվում է առաջնահերթություն, ՄՈՒՀ-ն ունի նաև չգրված քաղաքականություն իր լավ կադրերին (շրջանավարտներին, որոնք կրթությունը շարունակում են բուհում և միևնույն ժամանակ գործունեություն են ծավալում պրակտիկ ոլորտում) համատեղության կարգով հրավիրելու դասավանդելու, այդ փորձը նկատելի է նամանավանդ՝ «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» մասնագիտություններում: Համատեղությամբ աշխատողները հիմնականում ծանրաբեռնված են 360 ժամով: 2023-2024 ուսումնական տարվա մեկնարկին Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քուլեջը կրթական ծրագրերի իրականացման համար դասախոսական կազմի կարիք չունի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քուլեջում առկա են մասնագիտական առաջընթացի դրական օրինակներ, երբ աշխատակիցները դասախոսից դարձել են կարիերայի խորհրդատու, պրակտիկայի ղեկավար, ՈՆԱ պատասխանատու, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, առարկայական հանձնաժողովի նախագահ: Քուլեջում ընդունված են համահավասար չափով ֆինանսական խրախուսումները, որոնք հիմնականում տրամադրվում են ղեկտեմբեր ամսվա ավարտին, իսկ լրացուցիչ աշխատանքի համար 2023 թվականին ինքնավերլուծության խումբը, վերանորոգում իրականացրած աշխատակիցները և ընդունող հանձնաժողովի անդամները ստացել են լրավճարներ:

Ըստ 2023-2024 ուստարվա հաստիքացուցակի քուլեջում աշխատում է 33 վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ, բոլոր աշխատակիցներն ունեն պաշտոնի անձնագրեր, հստակեցված պարտականություններ: Հաստիքների համալրումը կախված է ուսանողների թվից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի թիվ 1 տարածաշրջանային պետական քուլեջը դասախոսական անձնակազմի ներգրավման համար առաջնորդվում է մրցութային կարգով, որը հնարավորություն է տալիս կրթական գործընթացներում ներգրավել մրցունակ, պատրաստված կադրեր, շատ դիմորդների պարագայում կատարել ընտրություն, միևնույն ժամանակ հարկ է նշել, որ գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար կարևոր է մրցութային հարցատոմսերում ներառել նաև մանկավարժական հմտությունները ստուգող հարցեր, հաշվի առնելով, որ վերջին տարիներին աշխատանքի ընդունվածները չունեն մանկավարժական կրթություն: Փորձագիտական խումբը գտնում է, որ դիմողներին մանկավարժական տեսանկյունից իրավիճակային հարցեր ուղղելը

հնարավորություն կտա մրցութային հանձնաժողովին ընտրություն կատարելիս շեշտադրել վերջիններիս մանկավարժական, հաղորդակցման հմտությունները:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջում ձևավորվել է դրական ավանդույթ՝ շրջանավարտներին աշխատանքի ընդունելը, ինչը արդյունք է շրջանավարտների կարիերայի հետազոծին հետևելու և նրանց քոլեջի զարգացման գործընթացի անմիջական մասնակիցը դարձնելու:

Գովելի է, որ Քոլեջը կարևորում է դասավանդողների փորձառությունը և բարձրագույն կրթությունը: Դասախոսական անձնակազմին ուղղված մրցութային կարգի և ՊԿԶ-ների պահանջներից զատ քոլեջը մշակել է նաև դասավանդողի/ արտադրական ուսուցման վարպետի պաշտոնի նկարագիր, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ նկարագրում կրթական ծրագրի, մոդուլի կամ առարկայի վերաբերյալ հատուկ պահանջներ (օրինակ՝ խոհարար վարպետը որ խոհանոցներին պետք է տիրապետի, ինչպիսի հատուկ կարողություններ պետք է ունենա և այլն) ներառելը հնարավորություն կտա Քոլեջին սահմանելու այն չափանիշները, որին համապատասխանելու պարագայում միայն տվյալ մասնագետը կկարողանա դառնալ Քոլեջի դասախոսը կամ վարպետը:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ դասախոսական անձնակազմի գնահատման, կարիքների վերհանման համար քոլեջում գործում են մի շարք մեխանիզմներ՝ դասալսումներ, հարցումներ, որոնց միջոցով վերհանվում են տարատեսակ խնդիրներ: Փորձագիտական խումբը միայն նշում է, որ դասախոսական կազմի և վարպետների գնահատման նպատակով իրականացվող հարցումները վերանայման և առավել թիրախային և արդյունքահենք դարձնելու կարիք ունեն, ինչը հնարավորություն կտա դասախոսների մասնագիտական որակների գնահատման հիմքում դնել առավել փաստարկված, ճիշտ վերլուծված տվյալներ:

Դրական է, որ քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող մոդուլային և մեթոդական վերապատրաստումներին, որը հնարավորություն է ընձեռում տեղայանցնել մոդուլային ծրագրերը, կազմել դասի պլանները և այլն, ինչպես նաև դասախոսական կազմի շարունակական զարգացման և փորձի փոխանակման նպատակով կազմակերպվում են ներքին վերապատրաստումներ, այդուհանդերձ փորձագիտական խումբը կարևորում է նաև արտաքին վերապատրաստումների անհրաժեշտությունը՝ նպաստելով մասնագիտական ոլորտի ժամանակակից մոտեցումների որդեգրմանը և տարածմանը: Նման վերապատրաստումներին դասախոսների մասնակցությունն ապահովելու համար քոլեջն անհրաժեշտություն կունենա տրամադրելու որոշակի բյուջե, ներդնելու վերապատրաստմանը կարիքները վերհանող մեխանիզմներ և համապատասխան պլան, թե տարեկան քանի դասախոսի է պատրաստ աջակցել նման վերապատրաստումների համար: Նման մոտեցումը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական որակների շարունակական զարգացմանը և քոլեջի վարկանիշի առավել բարձրացմանը:

Դրական է, որ դասախոսական անձնակազմի մեծ մասը հիմնական աշխատակիցներ են, հատկանշական է, որ քոլեջը ներգրավել է նաև մեծ թվով պրակտիկ մասնագետների, որոնցից շատերը քոլեջի շրջանավարտներն են: Պրակտիկ մասնագետների ներգրավումը հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռքբերել այնպիսի հմտություններ, որոնց պահանջը թելադրում է անմիջապես աշխատաշուկան: Գնահատելի է, որ վերջին տարիներին դասախոսական կազմն ավելացել է, աշխատանքի են ընդունվել երիտասարդ կադրեր, ովքեր դասապրոցեսի ընթացքում ցուցաբերում են նորարարական մոտեցումներ:

Դրական է, որ բոլոր ՄԿԾ-ները համալրված են տեսական և գործնական պարապմունքներ վարող դասախոսներով: Քոլեջում առկա են դասախոսական անձնակազմի առաջընթացի լավ օրինակներ, կատարված լրացուցիչ աշխատանքի համար առկա են խրախուսման, շահադրաման մոտեցումներ, որոնք մոտիվացնում են դասախոսներին և աշխատակիցներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, մեծ թվով պրակտիկ մասնագետներ, դասախոսների ընտրության մրցութային կարգ, ունի կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մասնագիտական ներուժ, կազմակերպում է ներքին և մեթոդական վերապատրաստումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի 2023-2028թթ. ՌԾ-ում ներառված չեն հետազոտության ոլորտում քոլեջի հավակնությունները, դրանից բխող գործողությունների շղթան: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Քոլեջի դասախոսներն իրենք են ձեռնամուխ լինում կրթական ծրագրերում ներմուծել հետազոտական, ստեղծագործական բաղադրիչ՝ գործուն քայլեր ձեռնարկելով հետազոտության իրականացման ուղղությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվող բոլոր կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչն արտահայտված է ուսանողներին տրամադրվող ընթացիկ, կուրսային և դիպլոմային աշխատանքներում: Հետազոտական և ստեղծագործական աշխատանքները հանդիսանում են դասախոսների և ուսանողների առօրյա աշխատանքների պարտադիր բաղադրիչը և ՄԿԾ-ների մաս են կազմում, սակայն կուրսային աշխատանքները հստակ արտահայտված չեն ուսպլաններում՝ դրանք առանձին դասախոսների առաջադրանքներ են: «Խոհարարական գործ» ՄԿԾ-ում արտադրական ուսուցման ժամերին ուսանողները ստեղծում են նոր թանձրուկների (սոուսների) բաղադրատոմսեր, որոնց համար փորձում են ձեռք բերել նաև հեղինակային իրավունք: Թանձրուկների պատրաստման համար ուսանողներն օգտվում են էլեկտրոնային հարթակներից, այնտեղից վերցնում են պատրաստի բաղադրատոմսեր, որոնք ենթարկում են փոփոխությունների՝ ներդնելով իրենց գաղափարները և ավելացնելով նոր բաղադրիչներ: «Ուկերչություն» կրթական ծրագրում ուսանողներն ուսումնասիրում են տարբեր նախշեր, վերջիններիս պատմությունը և օգտագործում իրենց կողմից պատրաստած զարդերում:

«Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» ՄԿԾ-ներում ուսանողներն իրականացնում են վերլուծություններ իրենց դիտած ֆիլմերի և ներկայացումների վերաբերյալ, քննարկում լսարանում, համեմատություններ անցկացնում հին և նոր կինոմատոգրաֆի միջև: Բացի այդ ուսանողներին հանձնարարվում է գրել սցենարներ, կերտել տարբեր կերպարներ, որոնք խաղալու համար ուսումնասիրություն են կատարում, իրենց համար քարտեզագրում են կերպարի բնավորությունը, խառնվածքը, արտաքին տեսքը, խոսքը, միմիկան, աշխարհայացքը և այլն, օրինակ՝ գյուղապետի կերպարը: Արվեստի ոլորտի («Դերասանական արվեստ», «Ռեժիսուրա» և «Պարի ուսուցում») կրթական ծրագրերի դասախոսական և ուսանողական համակազմերի ստեղծագործական աշխատանքներին նպաստում է նաև Քոլեջում գործող «Ուրիշ» ուսանողական թատրոնը, ուսանողները հնարավորություն ունեն իրենց ավարտական և կուրսային աշխատանքների շրջանակներում ոչ միայն ստեղծագործել և գրել տարբեր սցենարներ, այլև դրանք բեմականացնել: Յուրաքանչյուր բեմականացում հետազոտական աշխատանք է, քանի որ հենց ուսանողներն են ստեղծում պիեսի գաղափարը (մի քանի ճանաչված ստեղծագործություններից մի քս տարբերակ են ստանում), մշակում, քննարկում, հետո բեմադրում և ներկայացնում հանդիսատեսին:

«Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» մասնագիտությունների երկրորդ կուրսում ուսանողները կատարում են կուրսային աշխատանք, որոնք ռեժիսորների մոտ կարճամետրաժ ֆիլմեր են, իսկ դերասանների մոտ՝ բեմադրությունները: Հաջողված աշխատանքները ավելի են կատարելագործվում և դառնում ավարտական աշխատանք: Լինում են դեպքեր, երբ ուսանողներն աշխատում են նաև խմբով՝ երբեմն այդ ներկայացումներում ներգրավելով ոչ արվեստի ոլորտի սովորողներին: Փորձագիտական այցի ընթացքում փորձագիտական խումբը, ուսանողները, հրավիրյալները դիտեցին «Կապուտաչյա հայրենիք» ներկայացումը, որին մասնակցում էին և՛ դերասանները, և՛ ռեժիսորները, և՛ պարողները, և՛ մեկ խոհարար: Ներկայացումը բեմադրելու համար սցենարիստը ուսումնասիրել էր Եղիշե Չարենցի «Դանթեական առասպելը» և Հումբոլդի «Աստվածային կատակերգություն» ստեղծագործությունները՝ մեկտեղելով մեկ բեմականացման մեջ:

«Արվեստի պատմություն» մոդուլի շրջանակներում ուսանողներին առաջադրվում են ստեղծագործական, հետազոտական և վերլուծական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ՝ ֆոտոխցիկի միջոցով վերարտադրելու նշանավոր նկարիչների հայտնի կտավները, օրինակ՝ «Խորհրդավոր ընթրիքը», «Մարգարտե ականջողով աղջիկը» և այլն: Առաջադրանքն իրականացնելու համար ուսանողներն ուսումնասիրում են կտավները, պատմությունը, ժամանակաշրջանը, մարդկանց փոխհարաբերությունները, զգացողությունները, իրավիճակը և այլն: Հանրակրթական առարկաների դասախոսները ուսանողներին հանձնարարում են այնպիսի առաջադրանքներ, որոնք սերտորեն կապ կունենան մասնագիտության հետ, օրինակ՝ ռուսաց լեզվի դասախոսը դերասանների հանձնարարել են կարդալ Սարոյանի «Իմ անունն Արամ է» աշխատությունը և այն բեմադրել են ռուսերենով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Թատրոնի պատմություն» մոդուլի դասախոսը նախատեսել է վիկտորինա-մրցույթ անցկացնել «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» մասնագիտությունների համապատասխան կուրսերի միջև: Վիկտորինայի թեմա է ընտրվել թատրոնի սկզբնավորումը, առաջին փուլում մրցող թիմերը թատրոնի սկզբնավորումը ցույց կտան կատակերգության և ողբերգության համադրությամբ փոքրիկ բեմականացմամբ: Երկրորդ փուլը կվերաբերի ժամանակակից թատրոնին: Նշվեց, որ մինչ այդ մրցույթը կազմակերպելը ուսանողներին տրվելու է տեսական գիտելիք, որից հետո նոր կտրվի մրցույթի

հանձնարարականները, որոնք իրականացնելու համար պետք է ուսանողները իրականացնեն ուսումնասիրություններ, կարդան գրքեր, որոնք համացանցում, մտածեն կերպարներ և կերտեն: Այս աշխատանքը նախատեսված է իրականացնել կիսամյակի վերջում:

Հետազոտական աշխատանքներ են համարվում նաև ուսանողների դիպլոմային, ավարտական աշխատանքները՝ թատերական ներկայացումները, ֆիլմերը, պարային ներկայացումները, տարբեր ճաշատեսակների պատրաստումը: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջը հանրայնացնում է ուսանողների ստեղծագործական արդյունքները տարբեր միջոցներով՝ ֆեյսբուքյան էջով, այլ վայրերում ներկայացումներ տալով և այլն:

«Խոհարարական գործ» ՄԿԾ-ում դասախոսական կազմը այցելել է Ֆրանսիա և Լեհաստան, ուսումնասիրել են նրանց ազգային խոհանոցները և իրենց հետ բերել նոր ազգային ճաշատեսակների բաղադրատոմսեր, որոնք ներդրել են ծրագրում և ավադական խոհանոցները դասավանդելիս նշված բաղադրատոմսերը ներկայացնում են, իսկ ուսանողները՝ պատրաստում:

Քոլեջի երկու դասախոս մասնագիտական ձեռնարկների հեղինակ են՝ «Ապագա խոհարար» /2019թ./ և «Հաղորդակցության հմտություններ» ձեռնարկները: Անհրաժեշտ է նշել, որ մշակված ձեռնարկները ներդրվել են կրթական ծրագրերում և դարձել ուսումնական նյութեր: «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» ՄԿԾ-ների դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներն արտահայտվում են նոր բեմադրությունների ստեղծմամբ, այսպիսի բեմադրություններում արտահատվում է դասախոսական կազմի և ուսանողների համագործակցությունը, որի արդյունքում ուսանողները դիտարկում են իրենց վարպետների խաղը, վերլուծում, սովորում: Ոսկերչության վարպետը կրթական ծրագրի գործնական դասերի մեջ օգտագործում է իր անձնական ուսումնասիրությունները, իր ստեղծած մոդելները, որոնք նոր շունչ են ստանում ուսանողների կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի բոլոր կրթական ծրագրերում կարևորվում է ուսանողի ստեղծագործական, վերլուծական մտքի ձևավորումը: Չնայած նրան, որ Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջն իր 2023-2028 զարգացման ծրագրում չի ներառել հետազոտական գործունեությամբ զբաղվելու նպատակադրումները, հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն չի մատնանշել, այդուհանդերձ տարբեր ՄԿԾ-ներում, տարբեր մոդուլների և առարկաների դասախոսները կարևորում են ուսանողի կողմից իրականացվող ինքնուրույն հետազոտական, ստեղծագործական աշխատանքները, որոնք տարաբնույթ են, պարունակում են հետազոտական բաղադրիչ և ապահովում են վերջնարդյունքով պահանջվող հմտությունների և կարողությունների ձևավորումը: Նման մոտեցումը պայմանավորված է նաև կրթական ծրագրերի ուղղվածությամբ, կրթական ծրագրերը հիմնականում պատկանում են արվեստի ոլորտին և իրենցից ենթադրում են ստեղծագործական մոտեցում: Դրական է, որ ոլորտային շեշտադրումները քոլեջի համար դարձել են առավելություններ և ուսանողներին տրամադրվող առաջադրանքների մեծ մասում առկա է ստեղծագործողի, հետազոտողի և վերլուծողի կարողություններ:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ ուսանողների կատարած հանձնարարությունները կրթական ծրագրերի անբաժանելի բաղադրիչ են: Գովելի է, որ որպես հետազոտություն քոլեջում ներդրված են նաև կուրսային աշխատանքները, ավարտական դիպլոմային նախագծերը, որոնց շնորհիվ պարզ է դառնում ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռքբերած հմտությունները, բացի այդ այդ աշխատանքները քոլեջի համար արտաքին գովազդի կարևորագույն գործիքներից են: Գովելի է, որ հետազոտական տարր

պարունակող հանձնարարականների ընդհանուր գաղափարի շուրջ համախմբում են տարբեր մասնագիտությունների ուսանողները: Նման օրինակները գովելի են և խոսում են միջմասնագիտական կապի և ներառականության մասին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ վերը նշված առաջադրանքների իրականացումը կարող է դառնալ ինստիտուցիոնալ մակարդակում ամրագրված քաղաքականություն, որը կնպաստի ուսանողների կողմից նման աշխատանքների ստացմանը և իրականացմանը՝ անկախ դասախոսի կամ վարպետի փոփոխությունից:

Հատկանշական է, որ հետազոտական բաղադրիչը քոլեջում առավել արտահայտիչ է երևում դասախոսների աշխատանքում, քանի որ մեծ թիվ են կազմում մասնագիտությամբ աշխատող, գործող մասնագետները, վերջիններիս ստեղծած անհատական զարդի նախագիծը, նոր համեմունքի կամ ստուսի կիրառումը դասապրոցեսում, բեմականացումները և դերասանական խաղը, մասնագիտական ձեռնարկների ստեղծումը հնարավորություն է տալիս քոլեջում հետազոտական և վերլուծական հմտությունների համընդհանուր զարգացմանն ու տարածմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջը կարևորում է հետազոտական, վերլուծական, ստեղծագործական աշխատանքների և ՄԿԾ-ների անմիջական կապը, լավ մասնագետի պատրաստման համար ստեղծագործական և ինքնուրույն մոտեցումների զարգացումն համարում առաջնային, պրակտիկ մասնագետները նույնպես ներգրավված են հետազոտական գործընթացներում, կան մասնագիտական ձեռնարկներ, հեղինակային բաղադրատոմսեր, զարդեր ստեղծող դասախոսներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Քոլեջում ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 մասնաշենքերում: Առաջին մասնաշենքի մակերեսը 4768,6քմ է: Մասնաշենքում առկա է 17 լսարան, որոնք բարեկարգ են, հիմնականում վերանորոգված, ապահովված անհրաժեշտ գույքով: Որոշ լսարաններ ունեն թեմատիկ կահավորանք և ձևավորում՝ բնագիտական առարկաների, պատմության, նախնական զինվորական պատրաստության և այլն: ՆՁՊ-ի լսարանը կահավորված է լրացուցիչ անհրաժեշտ պարագաներով: Քոլեջի շենքն ունի տարհանման համար նախատեսված մուտքեր, նկուղ:

Համակարգչային լսարանում տեղադրված է 22 համակարգիչ, ու թեև դրանք հին սերնդի համակարգիչներն են, սարքին են, աշխատող:

Մասնաշենքում կա կինոդիումների սրահ, որը նաև ծառայում է որպես մոնտաժային սենյակ՝ համապատասխան համակարգիչներով: Վերջին տարվա ընթացքում, մասնավորապես՝

Լուսանկարչական գործ կրթական ծրագրի համար կառուցվել է հաստուկ լուսանկարչական տաղավար-լսարան: Այդ նպատակով՝ Քոլեջը համալրել է առկա ռեսուրսները՝ ձեռք բերելով լուսանկարչական ապարատներ, և նախատեսում է անհրաժեշտության դեպքում ձեռք բերել լրացուցիչ անհրաժեշտ սարքավորումները:

Քոլեջի Խոհարարական գործ կրթական ծրագրի համար գործում է չորս խոհանոց: Խոհանոց-արհեստանոցները հազեցած են համապատասխան գույքով, խոհանոցային տեխնիկայով, սպասքով, որը պարբերաբար թարմացվում է: Տեխնիկական բազան նորացնելու համար որոշ ծախսեր կատարվում են Քոլեջի կողմից, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խոհանոցային տեխնիկա Քոլեջին նվիրել են նաև ուսանողների ծնողները: Խոհանոցի օդափոխիչները սարքին են: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրեցինք, որ նշված տարածքները, գույքը, տեխնիկան պահպանվում են իրապես մաքուր, նկատելի է հոգատար վերաբերմունք և մասնագիտական կարգապահություն թե՛ դասավանդողների, թե՛ սովորողների կողմից: Խոհանոցների պատերին փակված էին անվտանգության կանոնները:

Մասնաշենքում կա 3 պարասրահ, որից մեկը ծառայում է որպես կանոն դերասանական և ռեժիսորական կրթական ծրագրերով ուսանողների, մյուս երկուսը՝ Պարի ուսուցում ծրագրի ուսանողների համար: Բոլոր պարասրահներում առկա են պարային հաստոցներ՝ ձողափայտեր, դահլիճներից երկուսը հայելապատ են: Սրահներում կան երաժշտական նվագարկիչներ: Կից առկա են բարեկարգ հանդերձարահներ:

Ընթացիկ տարում որպես փորձասենյակ կամ փոքր բեմ է վերանորոգվել Քոլեջի սրահներից մեկը, որն ունի նաև առանձին մուտք բակից: Փորձասենյակն արդեն ունի գույք՝ աթոռներ հանդիսատեսի համար, սակայն կարգավորման աշխատանքներն այստեղ դեռ շարունակվելու են, քանի որ դեռևս լուծված չեն լուսային և ձայնային ապահովման խնդիրները:

Ոսկերիչական գործի ուսանողների համար նախատեսած արհեստանոցը նույնպես հազեցած է համապատասխան հաստոցներով և սարքավորումներով: Թեև դրանք նոր չեն, հարկ է արձանագրել, որ պահպանված են խնամքով, աշխատանքային վիճակում են: Կարճաժամկետ՝ վարսահարդարման, մատնահարդարման դասընթացների համար նախատեսված է առանձին արհեստանոց, արտեղ առկա է գույք և սարքավորումներ, վերջինս պարբերաբար չի շահագործվում՝ պայմանավորված կարճաժամկետ ծրագրերի նկատմամբ շահակիցների ոչ մեծ հետաքրքրվածությամբ:

Քոլեջի գրադարանն ունի մոտ 18430 կտոր գիրք, գրադարանը հնարավորինս համալրվում է ժամանակակից ուսումնական գրականությամբ: Որպես կանոն, գրքային ֆոնդի համալրումը տեղի է ունենում նվիրատվությունների միջոցով: Փորձագիտական հանդիպումների ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին անհրաժեշտ մասնագիտական գրականության պակասի մասին, հատկապես՝ հայերենով: Մինևնույն ժամանակ, փորձագիտական խումբն արձանագրում է, որ ուսանողներին անհրաժեշտ բոլոր ուսումնական նյութերը դասախոսները տրամադրում են էլեկտրոնային՝ moodle, հարթակի միջոցով, որը հասանելի է ուսանողների համար:

Քոլեջն ունի ֆիզկուլտուրայի դահլիճ, որն ունի վերանորոգման կարիք:

Վարչական կազմի աշխատասենյակները հիմնականում մասնաշենքի երկրորդ հարկում են: Նշենք, որ բոլոր ստորաբաժանումների աշխատակիցներն ունեն առանձնացված աշխատանքային տարածք, ապահովված են համակազմիչներով, ինտերնետով:

Քոլեջի բուժկետը համալրված է համապատասխան գույքով, դեղորայքով, այլ անհրաժեշտ պարագաներով: Առկա է բուժկետի կանոնակարգ, բուժքույրի հաստիքը համալրված է համապատասխան մասնագետով: Բոլոր դասավանդող դասախոսները և «Խոհարարական գործ»

մասնագիտությամբ սովորողները ուսումնական տարվա սկզբին անցնում են բուժզննում և ունեն անհատական սանիտարական գրքույկներ, որոնք պահվում են բուժկետում: «Խոհարարական գործ» մասնագիտությամբ սովորող ուսանողները սանիտարիզացիայի կանոնների ապահովման նպատակով կրում են հատուկ համազգեստ:

Մասնաշենքում գործում է բուֆետ, որի միջոցով լուծվում է ուսանողների կողմից սնունդ ձեռք բերելու խնդիրը:

Քոլեջի 2-րդ մասնաշենքում, որի ընդհանուր մակերեսը 859քմ է, կա 225 հանդիսատեսի համար նախատեսված թատերական դահլիճ՝ հագեցած լուսային և ձայնային սարքավորումներով, որոնք ըստ անհրաժեշտության և Քոլեջի հնարավորությունների նորացվում են: Դահլիճն ունի առանձին մուտք: Դահլիճի համար վերջին շրջանում ձեռք է բերվել լուսային տեխնիկա, առաջիկայում պլանավորվում է նաև ձայնային տեխնոլոգիայի նորացում: Ուսանողներն ու Քոլեջի դասախոսներն այստեղ հնարավորություն են ունենում իրականացնել թատերական բեմադրություններ: Երկու ներկայացման հանդիսատես դարձավ նաև փորձագիտական խումբը՝ հնարավորություն ունենալով գնահատել թե՛ սրահի գործնական տեխնիկական հնարավորությունը, թե՛ բեմում ներկայացվող ուսանողների և դասախոսների ստեղծագործական աշխատանքը:

Քոլեջի 2-րդ մասնաշենքում կա 8 լսարան՝ համապատասխան գույքով:

Քոլեջն ունի հակահրդեհային ազդարարման գործող համակարգ, միջանցքներում առկա են կրակմարիչներ: Բոլոր հարկերում փակցված են տարհանման սխեմաները: Մասնաշենքերում և ողջ տարածքում տեղադրված են տեսախցիկներ, որոնց միջոցով վերահսկվում է անվտանգությունը և բացառվում օտար անձանց մուտքը տարածք, տարածքը բոլոր կողմերից պարսպապատ է: Քոլեջի անվտանգության ծառայությունը գործում է իր կանոնակարգի համաձայն: Մասնաշենքի մուտքն ունի թեքահարթակ՝ հարմարեցված հատուկ կարիքներ ունեցող շահակիցների համար: Թեև այս պահին Քոլեջում հենաշարժողական խնդիրներով սովորողներ և դասավանդողներ չկան, առաջին հարկի սանհանգույցներից մեկը հարմարեցված է հատուկ կարիքներ և տեղաշարժման խնդիր ունեցողների համար:

Փորձագիտական այցի արդյունքներով կարելի է ասել, որ Քոլեջն իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն իրականացնելու համար կարողանում է հատկացնել համապատասխան ռեսուրսներ, այդ թվում՝ ֆինանսական: Միևնույն ժամանակ, տեսանելի է, որ ռեսուրսների բաշխումը տեղի է ունենում հավասարաչափ բոլոր կրթական ծրագրերի համար:

Փաստաթղթերի վերլուծությունը ֆինանսական ռեսուրսների կառավարման տեսակետից ցույց է տալիս, օրինակ, որ 2020 թվականին աշխատավարձի ֆոնդը ամբողջ բյուջեի նկատմամբ կազմել է 62.36%, 2021-ին՝ 60.09%, 2022-ին՝ 61.01%: Միևնույն ժամանակ, ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերի մասը ամբողջ բյուջեի նկատմամբ 2020-ին կազմել է 0.36%, 2021-ին՝ 0.47%, իսկ 2022-ին՝ 1.04%: Քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխումն իրականացվում է ներքոհիշյալ ուղղություններով՝ աշխատավարձ, ուսումնական գործընթաց/կրթական ծառայություններ, պետական բյուջեի վճարումներ, ընթացիկ ծախսեր, այդ թվում՝ քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով: Քոլեջի կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է ֆինանսական տարվա սկզբում՝ կառավարման խորհրդի կողմից հաստատված նախահաշվով և դրա հիման վրա կազմված գնումների պլանով: Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններից հայնի է դառնում, որ վերջին երեք տարվա կտրվածքով Քոլեջը չի ունեցել ֆինանսական պարտքեր կամ չկատարված պարտավորություններ: Ֆինանսական տարին

փակվել է մնացորդով, որն օգտագործվել է հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կազմակերպության կարիքների համար՝ աշխատակիցներին խրախուսումներ, հավելավճարներ, անհրաժեշտ այլ ծախսերով: Քոլեջն ունի 2016 թվականին հաստատված «Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ»:

Փաստաթղթաշրջանառության կառավարման տեսանկյունից Քոլեջն առանձնացնում է երկու ուղղություն՝ ներքին և արտաքին: Ընդ որում՝ արտաքին փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարումն իրականացվում է Mulberry համակարգով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Քոլեջի համակարգչային ներքին ցանցի, ինչպես նաև էլեկտրոնային փոստերի միջոցով: Ըստ անհրաժեշտության՝ գործընթացն իրականացվում է ավանդական՝ թղթային տարբերակով՝ առձեռն եղանակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն ունի բավականին հազեցված նյութատեխնիկական բազա բոլոր կրթական ծրագրերի համար: Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան ենթակառուցվածքներ, ինչի շնորհիվ կարողանում է հասնել կրթական ծրագրերով նախատեսված նպատակներին և վերջնարդյունքներին:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում Քոլեջի ղեկավարության ջանքերը առկա ռեսուրսները պահպանելու, զարգացնելու ու ընդլայնելու ուղղությամբ: Գովելի է այն մոտեցումը, որով բոլոր մասնագիտությունների նկատմամբ հավասարաչափ ուշադրություն է դարձվում ու հատկացվում անհրաժեշտ նյութական ռեսուրսներ: Թեև Քոլեջի ֆինանսական կառավարումը չի պլանավորվում ռազմավարական զարգացման ծրագրից բխող քայլերի տրամաբանությամբ, անկհայտ է, որ ռեսուրսները բաշխվում են կրթության որակի բարելավման և կայության ապահովման տրամաբանությամբ: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ բյուջեի բաշխումն ըստ զարգացման ծրագրի հիմնախնդիրների առավել նպաստավոր կդարձնի իրականացվող աշխատանքները, ինչն իր հերթին կհանգեցնի ռազմավարական զարգացման ծրագրի նպատակների, կրթական ծրագրերի երաշխավորված, կայուն ու շարունակական իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի քաղաքականությունը անձնակազմի խրախուսմանն ուղղված ֆինանսների բաշխման տեսանկյունից, ինչը կարող է խթան հանդիսանալ մասնագիտական զարգացման և նոր գիտելիքների ստեղծման ճանապարհին: Դա կարող է լրացուցիչ երաշխիք դառնալ դասախոսական կազմի մանկավարժական, ստեղծագործական, հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացման համար:

Դրական է, որ Քոլեջն ունի գրադարան, որը հիմնականում ապահովված է համապատասխան գրականությամբ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը կարող է առավել մեծ ջանքեր գործադրել մասնագիտական գրականություն ձեռք բերելու տեսանկյունից՝ չսպասելով միայն բարեգործական նվիրատվություններին:

Դրական է, որ Քոլեջում առկա է անվտանգ և ապահով միջավայր ուսանողների համար, որը հնարավորություն է ընձեռում իրականացնելու անխախտ կրթական գործընթաց:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ենթակառուցվածքներ, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսներ, ձևավորել է կրթական գրավիչ միջավայր և ուսումնական նպաստավոր մթնոլորտ,

ստեղծել է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով, այդ թվում՝ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը համապատասխանում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն ունի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգ, որով ոչ միայն սահմանում է ներքին և արտաքին շահակիցներին, այլև ուրվագծում է նրանց առջև Քոլեջի գործունեության վերաբերյալ հաշվետվողականության մեթոդները: Այսպես, օրինակ, տնօրենը հաշվետու է ներքին և արտաքին շահակիցներին՝ տարեկան հաշվետվության, դրա վերլուծության ձևով: Վերջինիս հաշվետվությունը ձևավորվում է Քոլեջի բոլոր ստորաբաժանումների՝ ամբիոնների, Կարիերայի կենտրոնի, տնօրենի տեղակալների և այլն, հաշվետվությունների հիման վրա, որոնք առավելապես նկարագրողական են և հիմնականում ոչ վերլուծական: Տնօրենը հաշվետու է նաև Քոլեջի կառավարման խորհրդին: Հաշվետվություններն ամփոփում են տեղեկատվություն քոլեջի տարեկան աշխատանքների մասին, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք չեն բխում քոլեջի սահամանած ռազմավարական ծրագրի դրույթներից: Արտաքին հաշվետվողականության տեսանկյունից Քոլեջի Կարիերայի կենտրոնը նաև եռամսյա հաշվետվություններ է ներկայացնում ԿԳՄՍ նախարարություն, որտեղ ներկայացվում են տվյալներ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Որպես արտաքին հաշվետվողականության գործիքներ են դիտարկվում նաև Քոլեջի պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը, յութուբյան ալիքը և այլն: Ֆեյսբուքյան էջը, որը համարվում է տեղեկատվության փոխանցման հիմնական միջոցը քոլեջի ներքին և արտաքին շահակիցների միջև, վերահսկվում է անմիջականորեն տնօրենի կողմից: Սոցիալական ցանցում տեղադրվում են Քոլեջի գործունեությանը վերաբերող տարատեսակ նյութեր՝ տեղեկատվություն, կարճաժամկետ դասընթացների, ներկայացումների, ուսանողական կյանքի, այլ միջոցառումների մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված էջին հետևում են թե դասախոսները, թե ուսանողները, թե շրջանավարտները, թե գործատուների ներկայացուցիչները: Սոցիալական այս ցանցի էջը նաև դիմորդների՝ Քոլեջի ապագա ուսանողների հետ հաղորդակցման հիմնական միջոցն է: Ի դեպ, Քոլեջի ֆեյսբուքյան էջն ունի ավելի քան 2000 հետևորդ: Նույն հարթակում առկա են նաև Քոլեջի Որակի ապահովման ենթակառուցվածքի, Ուրիշ ՈՒԽ-ի էջերը, որոնք սակայն այդչափ ակտիվ չեն, և չունեն հիմնական էջի հազեցվածությունը և հետևորդների թիվը: «Ուրիշ» ուսանողական խորհուրդ էջում առավելապես տեղադրվում են ուսանողական ստեղծագործական

կյանքին նվիրված նյութեր՝ հին և նոր ներկայացումներ, հարցազրույցներ, կամավորական աշխատանքների, դասընթացների, վարպետաց դասերի, ուսանողական մրցանակաբաշխությունների, ՈՒԽ-ի գործունեության մասին:

2023 թվականի հունիսից գործում է ինստագրամյան պաշտոնական էջը, որը համակարգվում է ՈՒԽ-ի կողմից: Ինստագրամյան էջում առկա հիմնական տեղեկատվությունը վերաբերում է ներկայացումներին, կամավորական աշխատանքներին, էքսկուրսիաներին և ուսանողական կյանքին:

Քոլեջը ունի նա YouTube-յան էջ՝ 1Coll NEWS, որտեղ ներկայացվում են հարցազրույցներ քոլեջի ներքին և արտաքին շահակիցների հետ, ռեպորտաժներ ներկայացումների, ուսանողների պրակտիկաների և այլնի վերաբերյալ, էջն ունի 355 բաժանորդագրություն:

Առանձին խորագրով ներկայացված են Քոլեջի անմահացած ուսանողներն ու շրջանավարտները:

Քոլեջի սոցիալական հարթակներում տեղեկատվություն ապահովելու և հանրային կապերն ակտիվացնելու նպատակով՝ 2023թ. սեպտեմբերին ձևավորվել է հասարակայնության հետ կապերի մասնագետի հաստիքը, որն առաջարկվել է այս պահին համապատասխան մասնագիտությամբ ուսումը բարձրագույն ուսումնական հաստատությունում շարունակող Քոլեջի շրջանավարտին:

Քոլեջն ունի կայքէջ <http://www.yerevancollege.am/>, որի միջոցով կարելի է տեղեկություն ստանալ կրթական ծրագրերի, առաքելության մասին: Այն տեղեկատվությամբ շատ հագեցած չէ, սակայն կայքում առկա է Մոդուլներ բաժին, որի մուտքի իրավունք ունեն միայն ուսանողներն ու դասախոսները: Վերջինս գործող հարթակ է, որտեղից ուսանողները կարող են գտնել դասախոսների կողմից տեղադրված ուսումնառության վերաբերյալ բոլոր անհրաժեշտ նյութերը:

Կայքէջն ունի նաև հետադարձ կապ բաժինը, որն ակտիվ է, անհրաժեշտ է նաև նշել, որ Քոլեջը ներկայացվող հարցերին արագ է արձագանքում: Շրջանավարտների հետ հետադարձ կապն ապահովում է կարիերայի կենտրոնի, դասախոսական կազմի և կուրսղեկների միջոցով: Հետադարձ կապը ապահովվում է նաև հեռախոսակապի և էլեկտրոնային նամակագրության միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջում շրջանավարտ և քոլեջ կապը բավականին սերտ է:

Քոլեջը հասարակությանն արժեքներ է փոխանցում «Ուրիշ» ուսանողական թատրոնի միջոցով, որի շնորհիվ ուսանողները և դասախոսները կարողանում են հանրությանը (դպրոցահասակ երեխաներին, ծնողներին և սոցիալական այլ շերտերին) մշակութային և բարոյական արժեքներ փոխանցել ներկայացումների միջոցով: Որպես հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմ Քոլեջը դիտարկում է նաև Զբաղվածության կենտրոնի հետ համատեղ իրականացվող կարճաժամկետ կրթական ծրագրերը, ինչպես նաև 2017 թվականից մեկնարկած համագործակցությունը ՄԱԿ-ի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի, որի շրջանակում Քոլեջը դարձել է ուսումնական կենտրոն, որի խոհարար վարպետ-դասախոսները վերապատրաստում են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի իրենց գործընկերներին: Քոլեջում կազմակերպվել են ներառական մասնագիտական կրթության դասընթացներ:

Դաստողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջում սահմանված հաշվետվողականության կարգի առկայությունը: Փորձագիտական խմբի դիտարկմամբ, Քոլեջը պատասխանատվությամբ է վերաբերում իր ներքին և արտաքին շահակիցների հետ թափանցիկ և բաց երկխոսությանը, միևնույն ժամանակ խումբը հավելում է հաշվետվություններն առավել

վերլուծական դարձնելու անհրաժեշտությունը, որը կնպաստի խնդիրների վերհանմանը և աշխատանքների շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում և կարևորում է Քոլեջի ներկայացվածությունը և ակտիվ աշխատանքը սոցիալական տարբեր հարթակներում, որոնք հնարավորություն են տալիս հասանելի դարձնել Քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը բոլոր շահակիցներին: Քոլեջի պաշտոնական կայքէջը ի տարբերություն սոցիալական հարթակների, ակտիվացման և տվյալների ներբեռնման կարիք ունի, որը կնպաստի ներկայացուցչական տվյալների տրամադրմանը ինչպես դիմորդներին, գործընկերներին, այնպես էլ մյուս շահակիցներին: Այս տեսանկյունից կարևոր է նաև կայքէջի օտարալեզու (անգլերեն, ռուսերեն) բաժինների ակտիվացումը և համատատասխան նյութերով համալրելը՝ ապահովելով տեղեկատվություն արտաքին (նաև միջազգային) գործընկերներին և շահակիցներին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կարևորելով հետադարձ կապի ապահովումը, Քոլեջին հաջողվում է կայուն և վստահելի համագործակցություն ստեղծել ներքին և արտաքին շահակիցների հետ, որն անդրադառնում է հասարակության մեջ Քոլեջի վարկանիշի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է «Ուրիշ» ուսանողական թատրոնի նշանակությունը, որն ինքնուրույն հարթակ է ուսումնական հաստատություն - հասարակություն համագործակցության շրջանակում գեղարվեստական արժեքներ ստեղծելու և տարածելու համար:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ունի հետադարձ կապի արագ արձագանքող մեխանիզմներ, որը թույլ է տալիս արտաքին շահակիցներին ստանալ տեղեկատվական աջակցություն իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Իսկ ինչ վերաբերում է Քոլեջի կողմից հասարակությանը արժեքներ փոխանցելուն, ապա անհրաժեշտ է նշել, որ գնահատելի է նամանավանդ «Ուրիշ» ուսանողական թատրոնի գործունեությունը, որը նպաստում է հանդիսատեսի (նամանավանդ աշակերտների) աշխարհայացքի ձևավորմանը և թատրոնի նկատմամբ հետաքրքրության և հարգանքի մեծացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն ունի ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, գործում է գործում են հետադարձ կապի ապահովման արագ արձագանքող մեխանիզմներ, ուսումնասիրելուց հետո փորձագիտական խումբը Երևանի թիվ 1 պետական քոլեջի հասարակական պատասխանատվությանը վերաբերող չափանիշը գնահատում է դրական:

Եզրակացություն: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Քոլեջի գործող Ռազմավարական ծրագրում արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող դրույթներ կամ նպատակներ ամրագրված չեն, վերջինս ՄՈՒՀ-ի

համար ռազմավարական առաջնահերթություն կամ հմնախնդիր չի դիտարկվում: ՄՈՒՀ-ի արտաքին կապերի ձևավորման և զարգացման համար պատասխանատու է քոլեջի տնօրենը, պրակտիկայի վարիչը, կարիերայի պատասխանատուն և հասարակայնության հարցերով պատասխանատուն: Վերջինս աշխատանքի է ընդունվել 2023թ. սեպտեմբեր ամսին: Հաստիքի ներդրումը նպատակ ունի նաև ապագայում զարգացնելու միջազգային գործընկերների և նոր համագործակցությունների ձեռքբերումը:

Քոլեջը ընդհանուր առմամբ համագործակցում է մոտ 40 անուն տեղական կազմակերպությունների հետ: Համագործակցությունների նպատակն է շարունակական կրթությունը, արտադրական պրակտիկաների կազմակերպումը, շրջանավարտների համար աշխատատեղերի ապահովումը և ընթացիկ ճանաչողական այցերը: Քոլեջն ունի համագործակցություններ բոլոր կրթական ծրագրերի պրակտիկայի կազմակերպման համար: Խոհարարական գործ ՄԿԾ-ի կազմակերպման համար քոլեջն ունի ամենաշատ գործատուները, որոնցից են՝ «Հայր և որդի Երեմյանները», «Պեստո սրճարանը», «Անի պլազա», «Արագած», «Նեռո», «Rose garden» և այլ ռեստորանային համալիրները: Դերասանական արվեստ ՄԿԾ-ների շրջանակներում քոլեջը համագործակցում է Պատանի հանդիսատեսի թատրոնի, Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի, «Երկիր մեդիա» հեռուստաընկերության հետ: Թատրոնների հետ համագործակցության արդյունքում քոլեջը նաև պայմանավորվածություն է ձեռք բերել ուսանողների անվճար այցերը ներկայացումներին ապահովելու համար: Տեղի են ունենում նաև այցեր թատրոններ, որոնք ունեն ուսումնաճանաչողական բնույթ: Բացի այդ, թատրոնների դերասանները հրավիրվում են քոլեջ և ուսանողների համար իրականացնում վարպետաց դասեր: Անհրաժեշտ է նշել, որ նոր գործատուների ձեռքբերմանը նպաստում են նաև շրջանավարտները (վերջինս առավել շատ շեշտադրված է «Խոհարարական գործ» ՄԿԾ-ում), որոնք աշխատանքի անցնելով տարբեր ռեստորանային համալիրներում աշխատանքային կապ են ստեղծում իրենց գործատուների և քոլեջի միջև:

Շարունակական կրթության նպատակով ՄՈՒՀ-ը համագործակցում է Խ.Աբովյանի մանկավարժական համալսարանի, Ռուս-հայկական համալսարանի, Եվրասիա միջազգային համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի Գլաձոր համալսարանի, Գորիսի պետական համալսարանի հետ: Միջին և նախնական ուսումնական հաստատությունների հետ քոլեջի համագործակցությունը թույլ է արտահայտված, որոշակի համագործակցություններ նկատելի են միայն կարիերայի կենտրոնների և տնօրենների միջև, որոնք իրականացվում են ոչ ֆորմալ ձևով: Փորձագիտական խումբը նշում է, որ համագործակցությունները թույլ են դասախոսական կազմի փորձի փոխանակման, կրթական ծրագրերի համեմատության տեսանկյունից:

2019թ. Քոլեջը մշակել է արտաքին կապերի և միջազգայնացման կենտրոնի գործունեության կարգ, որտեղ ներկայացվում են կառույցի նպատակներն ու խնդիրները, գործունեության հիմնական ուղղությունները, աշխատանքների կազմակերպումը: Անհրաժեշտ է նշել, որ Քոլեջում նման կենտրոն առկա չէ, իսկ կարգն իր կիրառությունը չի գտել, ինչպես նաև վերջինս համապատասխանեցված չէ Քոլեջի առանձնահատկություններին: Իսկ ինչ վերաբերում է միջազգայնացման գործընթացներին, ապա անհրաժեշտ է նշել, որ մինչ COVID19-ը համավարակը ՄՈՒՀ-ն ունեցել է որոշ գործընթացներ, 2018թ. մայիսին «Մասնագիտական կրթության ուսուցում-համագործակցություն» ծրագրի շրջանակներում փորձի փոխանակման նպատակով քոլեջի 1 ուսանող և 1 վարպետ «Խոհարարական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում այցելել են Լեհաստանի Սկեռննիցե քաղաքի Գլուխովի միջին մասնագիտական ուսումնական

հաստատություն, համավարակի պատճառով հետագա համագործակցություններ չեն եղել: 2023թ. - ից Քոլեջը նախաձեռնել է օտարերկրյա գործընկերներ գտնելու աշխատանքներ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համագործակցության բանավոր պայմանավորվածություններ են ձեռք բերվել Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի պետական համալսարանի, ինչպես նաև ՌԴ Չելյաբինսկի մարզի ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների հետ, նախատեսվում են ուսանողների և դասախոսների շարժունության ծրագրերի իրականացում, հյուրախաղեր և փորձի փոխանակում:

Իսկ ինչ վերաբերում է օտար լեզուների իմացությանը, ապա, ըստ քոլեջի տրամադրած տվյալների, դասավանդողների մոտ 19 տոկոսը, վարչական անձնակազմի 10%-ը և ուսանողների 35%-ն են տիրապետում օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ քոլեջը պլանավորում է վերապատրաստումներ:

Դասողություններ: Դրական է, որ Քոլեջն ունի գործընկերների ընդգրկուն ցանկ, որը նպաստում է ուսանողների ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Գովելի է, որ արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքներն ակտիվացնելու նպատակով Քոլեջը ներգրավել է նոր աշխատակցի, որը կարող է նպաստել նոր համագործակցությունների և հնարավորությունների ձեռքբերմանը: Մինչև ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ շատ կարևոր է, որպեսզի գործընթացները հստակ պլանավորվեն, անհրաժեշտ է ուրվագծվել այն պոտենցիալ գործընկերներին, որոնց հետ Քոլեջը ցանկանում է համագործակցել, մինչև ժամանակ անհրաժեշտ է նախապես հասկանալ, թե որոնք են լինելու համագործակցության շրջանակը, վերջինս կնպաստի առավել ուղղորդված գործընթացների իրականացմանը: Չնայած նրան, որ արտաքին կապերը և միջազգայնացման գործընթացները ՄՈՒՀ-ի առաջնահերթություններից չեն դիտարկվում, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ գործընթացները հաջողելու համար ՄՈՒՀ-ն անհրաժեշտություն կունենա գործընթացների զարգացումն ապահովող ռազմավարության, որտեղ հստակ կսահմանվեն ՄՈՒՀ-ի նպատակները, կանխատեսվող արդյունքները, արդյունքների հասնելու գործողությունները, ժամկետները և այլն: Այսպիսի մոտեցումը հնարավորություն կընձեռնի ունենալու երկարաժամկետ և հաջողված արդյունքներ: Համապատասխան գործընկերներ գտնելու դեպքում ՄՈՒՀ-ը կարող է դիտարկել նաև Erasmus + ծրագրերին դիմելու հնարավորությանը, որը կնպաստի ներքին շահակիցների կարողությունների զարգացմանը և այլընտրանքային ռեսուրսների ներգրավմանը:

Դրական է, որ Քոլեջի ունեցած համագործակցության շրջանակը տեղական միջավայրում նպաստում է ոչ միայն ուսանողների ընթացիկ ուսումնառության կազմակերպմանը, այլև վարպետաց դասերի և այլ միջոցառումների կազմակերպմանը, որը նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, վերջինս նաև մոտիվացիայի աղբյուր է ուսանողների համար՝ ապահովելով նրանց հաղորդակցության հնարավորությունները ոլորտում հաջողությունների հասած մասնագետների հետ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջն ունեցել է միջազգային գործընկերների հետ համագործակցության փորձառություն, որը հանգեցրել է նաև ուսանողի և վարպետի փորձի փոխանակմանը օտարերկրացի գործընկերների հետ, այս փորձառությունը կարող է նաև հիմք հանդիսանալ հետագա աշխատանքների համար: Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների իմացությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջիններիս լեզվի իմացության կարողությունների զարգացում, որը կնպաստի հետագայում վերջիններիս շարժունությանը և փորձի փոխանակմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Երանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը արդյունավետորեն համագործակցում է տեղական կազմակերպությունների հետ, որի արդյունքում կազմակերպվում է ոչ միայն ուսանողների ընթացիկ ուսումնառության գործընթացը, այլև իրականացվում են վարպետաց դասեր, արատքին կապերի և միջազգայնացման աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով ՄՈՒՀ-ը ներգրավել է նոր աշխատակից, Քոլեջն ունի միջազգային գործընկերների հետ հաղորդակցության փորձառություն, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը համապատասխանում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Երանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում Որակի ապահովման քաղաքականություն որպես այդպիսին առկա չէ: Որակի ապահովման համակարգը Քոլեջում ձևավորելու փորձեր իրականացվել են դեռևս 2010 թվականից: Այդ ժամանակահատվածում մի քանի ախատակիցներ մասնակցել են Որակի ապահովման ազգային կենտրոնի վերապատրաստումներին, ՄՈՒՀ-ն իրականացրել է ինքնավերլուծության աշխատանքներ, սակայն ՄԿՈՒ հաստատություններում հավատարմագրման գործընթացների երկարաձգմամբ պայմանավորված աշխատանքները դադարեցվել են:

Քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցածքի աշխատակարգը հաստատվել է 2018 թվականի հոկտեմբերի 23-ին: Աշխատակարգով սահմանվել են ստորաբաժանման գործառույթները, նպատակները, խնդիրները: Համաձայն աշխատակարգի՝ ստորաբաժանման նպատակներից են՝ նպաստել Քոլեջի առաքելության և ռազմավարական ծրագրի իրագործմանը և արդյունավետության բարձրացմանը, մշակել որակի վերահսկման, դրա մշտադիտարկման, գնահատման և բարելավմանն ուղղված մեխանիզմներ և այլն: Որպես խնդիրներ են դիտարկվում կրթական ծրագրերի պարբերաբար վերանայման, գնահատման և շարունակական բարելավման ապահովումը, դասախոսական կազմի կատարելագործումը, տեղեկատվության հասանելիության ապահովումը ներքին և արտաքին շահակիցներին, ինչպես նաև շահակիցների կարիքների վերհանումն ու դրանց ուղղված աշխատանքների իրականացումը:

Ստորաբաժանման աշխատակիցները եղել են Քոլեջի դասախոսներ, ովքեր վարձատրվել են արտաբյուջի միջոցներից: Այս ընթացքում ստորաբաժանման կազմը և պատասխանատուն պարբերաբար փոփոխվել են: Որակի ներկայիս պատասխանատուն իր գործառույթները՝ որպես հաստիքային միավոր, ստանձնել է 2023 թվականի փետրվարից՝ ազատվելով ուսումնական մասի

վարիչի պարտականություններից: Ընթացիկ տարվա ապրիլին, ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներով պայմանավորված, տնօրենի հրամանով հաստատվել է նաև Որակի ապահովման ենթակառուցվածքի նոր կազմ (աշխատանքային խումբ), որում Որակի պատասխանատուի հետ միասին ընգրկված են բոլոր ամբիոնների վարիչները, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և կադրերի տեսուչը: Փորձագիտական հանդիպումների, ինչպես նաև փաստաթղթի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ թեև որակի աշխատանքային խումբը բավականին ներկայացուցչական է, սակայն վերջինս չունի աշխատանքայի պլան, հստակեցված և ամրագրված չեն վերջինիս կողմից իրականացվող գործառնությունները, աշխատանքային խմբի հիմնական խնդիրը եղել է ինքնավերլուծության իրականացումը:

2023-2024 ուսումնական տարվա սկզբին Որակի ներքին ապահովման ստորաբաժանման աշխատակից է դարձել (ոչ լրիվ աշխատաժամանակով, արտաբյուջեի հաշվին) նաև Քոլեջի ավարտական կուրսի ուսանողներից մեկը, վերջինիս ընտրությունը պայմանավորված է եղել ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում նրա ուսանող-փորձագետ լինելու հանգամանքով: Անհրաժեշտ է նշել, որ Քոլեջը խրախուսում է ուսանողների ներգրավվածությունն այդպիսի աշխատանքներում: ՈԱԱԿ-ի Ուսանողության ձայն նախագծի շրջանակներում վերապատրաստված ուսանողները նաև ընդգրկվել են ինքնավերլուծության աշխատանքներում:

Քոլեջի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքն ապահովված է անհրաժեշտ կահավորանքով, աշխատասենյակով:

2022 թվականին Քոլեջում հաստատվել է Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը, համաձայն որի համակարգի վերանայումը ենթադրում է որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային, ժամանակային և նյութական ռեսուրսների վերլուծություն և վերանայում: Նշված փաստաթուղթը սահմանում է, թե ինչը կարող է հիմք հանդիսանալ որակի ներքին ապահովման համակարգի վերանայման համար՝ Քոլեջի գործունեության մշտադիտարկման և գնահատման արդյունքները, դրանց վերլուծությունը, ներքին և արտաքին գնահատման արդյունքները, դրանց վերլուծությունը, Քոլեջի շահակիցների կարծիքների վերլուծության արդյունքները: Փաստաթուղթը դեռևս կիրառություն չի գտել՝ պայմանավորված համակարգի նոր ձևավորմամբ:

2023 թվականի փետրվարին հաստատվել է Կրթության որակի պատասխանատուի պաշտոնի անձնագիրը: Փաստաթղթերի վերլուծության և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ պաշտոնի անձնագրով նախատեսված առանցքային դրույթը է, որ «Կրթության որակի պատասխանատուն առաջնորդվում է պլանավորում - իրականացում - գնահատում - վերանայում սխեմայով», այսինքն՝ գործողությունները պետք է իրականացվեն ՊԻԳԲ շրջափուլով: Անհրաժեշտ է նշել, որ ցիկլի լիարժեք իրագործման համար գնահատման մեխանիզմները լիովին ներդրված չեն, իսկ բարելավումները տեղի են ունենում առանձին անձանց կողմից քննարկումների միջոցով: Պաշտոնի անձնագրում նաև նշված է, որ որակի պատասխանատուն իր աշխատանքային պլանը կազմում է՝ հիմնվելով քոլեջի ռազմավարական ծրագրի վրա, սակայն, փաստացի, ինչպես մյուս ստորաբաժանումների, այնպես էլ որակի ենթակառուցվածքի թե աշխատանքային պլանը և թե հաշվետվությունը ոչ թե ռազմավարական զարգացման ծրագրի, այլ ընթացիկ աշխատանքներն իրականացնելու մասին է:

Որակի ապահովման ստորաբաժանման կողմից գնահատման հիմնական մեխանիզմը հարցումներն են, օրինակ, ուսանողները գնահատում իրենց դասավանդող անձնակազմին, դասախոսական կազմը գնահատում է քոլեջի գործունեության արդյունավետությունը և այլն:

Դասախոսների վերաբերյալ կատարված հարցումների արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնների վարիչների հետ: Հարցումներ են իրականացվում նաև սովորողների ծնողների շրջանում՝ կրկին քոլեջի գործունեության արդյունավետության վերաբերյալ: Որակի ապահովման պատասխանատուի կողմից հարցումների արդյունքները վերլուծվում են, սակայն անհրաժեշտ է նշել, որ վերջիններս խորքային վերլուծություններ չեն, դրանք առավել շատ վիճակագրական պատկեր ձևավորող են՝ ըստ տոկոսային միավորների: Վերլուծություններն իրենցից ներկայացնում են կարճ ամփոփումներ, որոնք խորքային պակեր չեն տալիս, օրինակ, սովորողների ծնողների հետ անցկացված հարցման արդյունքը ամփոփված է հետևյալ կերպ. «Ծնողները հիմնականում շնորհակալություն են հայտնում Քոլեջում իրենց երեխաների կրթությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար»: Կամ դասախոսական կազմի կարիքների գնահատման հարցման արդյունքն ամփոփված է. «Վերլուծությունից (իրականում՝ հարցման քանակական ամփոփումից՝ վիճակագրությունից) պարզ է դառնում, որ դասախոսական կազմի դժգոհությունը հիմնականում ցածր վարձատրությանն է ուղղված, որն էլ ֆինանսական խրախուսման՝ այն է պարզևատրումների միջոցով քոլեջը փոճում է մեղմել»:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անգամ Քոլեջի պատասխանատուները բարձր չեն գնահատում հարցումների արդյունավետությունը և ստացված արդյունքների օբյեկտիվությունը:

Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ քոլեջի շահակիցների կողմից որևէ դիմադրություն առկա չէ համակարգի ներդրման ուղղությամբ: Քոլեջի անձնակազմը կարևորում է որակի մշակույթի գործընթացները, պատրաստ է մասնակցել և աջակցել, սակայն լիարժեք տեղեկացված չէ և դեռևս չունի ամբողջական պատկերացումներ գործընթացի վերաբերյալ: Քոլեջի որակի ենթակառուցվածքի կողմից դեռևս հստակ տեսորոշված չէ որակի ապահովման համակարգի նշանակությունը: Հարկ է համարվում նշել, որ հաճախ ուսումնական մասի և որակի ենթակառուցվածքի աշխատանքները Քոլեջում նույնացված են դիտարկվում: Որակի պատասխանատուն ընդգրկված է Քոլեջի գրեթե բոլոր գործընթացներում, սակայն ոչ թե որպես ինքնուրույն գործող սուբյեկտ, այլ գործընթացների իրականացման օժանդակող, սպասարկող միավոր: Օրինակ, թե Քոլեջում կազմակերպվում են դասախոսների վերապատրաստումներ, տեսանելի չէ, թե որն է եղել որակի ստորաբաժանման կողմից բացահայտված կարիքը, որը բավարարելու համար կազմակերպվել է այս կամ այն վերապատրաստումը: Նշվում է, որ ստորաբաժանումը կազմակերպում է ՄԿԾ-երի պարբերական վերանայումները, ստուգում է ՄԿԾ-ների փաստաթղթային փաթեթները, սակայն դա իրականացվում է առավելապես ուսումնական գործընթացի կազակերպման, այլ ոչ թե որակի ապահովման քաղաքականության տեսանկյունից:

Քոլեջի որակի ապահովման ստորաբաժանումն իր նախաձեռնությամբ իրականացված հարցումների արդյունքերը չի վերլուծում և հանդես չի գալիս կոնկրետ առաջարկներով՝ արձանագրված խնդիրները և բացահայտված կարիքները լուծելու նպատակով: Արդյունքում, Քոլեջում ունենալով համախոհների աջակցություն և չունենալով իրականացվող գործընթացների նկատմամբ ընդդիմություն, որակի ենթակառուցվածքը լիարժեք չի իրականացնում իր գործառնությունները:

Որակի ապահովման գործընթացները չեն հրապարակվում՝ հիմնականում պայմանավորված նաև ունեցած ոչ մեծ արդյունքներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն ունի որակի ապահովման ստորաբաժանում՝ հաստատված աշխատակարգով և սահմանված գործառույթներով, սակայն խումբը նշում է, որ առավել թիրախային գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել որակի ապահովման համակարգի նպատակները՝ ընդգծելով հաստատության նպատակների իրագործման ուղղությամբ համակարգի աշխատանքը: Թեև Քոլեջի որակի ապահովման ենթակառուցվածքն ունի աշխատանքային պլան, դրա հիմքում ոչ թե ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման և գնահատման ապահովումն է, այլ ընթացիկ աշխատանքների կազմակերպումը: Կարևոր է նաև ՈԱ գործընթացում ներգրավված շահակիցների դերերի և պարտականությունների սահմանումը, ներառյալ՝ ղեկավարությունը, կրթական ծրագրերի պատասխանատուները, որակի ապահովման պատասխանատուն, դասախոսները, ուսանողները և այլն: Դա կնպաստի համակարգում գործող դերակատարների դերերի հստակեցմանը և աշխատանքի արդյունավետ պլանավորմանը և իրականացմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև ՈԱ գործընթացների հստակ պլանավորման կարևորությունը, որը միտված կլինի ՌԾ նպատակների, ենթակառուցվածքների արդյունավետության գնահատմանը՝ ապահովելով շարունակական բարելավում:

Քոլեջի որակի ենթակառուցվածքի կողմից իրականացվում են հարցումներ և ուսումնասիրություններ ներքին և արտաքին շահակիցների շրջանում, այնուամենայնիվ հարցաթերթիկների բովանդակությունը և հարցումների արդյունքների ոչ խորքային վերլուծությունները հնարավորություն չեն ընձեռում լիարժեք արձանագրելու ՄՈՒՀ-ի խնդիրներն և բացահայտելու եղած դրական փորձը, վերջինս հանգեցնում է նրան, որ որոշումների կայացման հիմքում դրվում են այնպիսի տվյալներ, որոնք դուրս են բերվում անձնական հաղորդակցման շրջանակներում: ՈԱ գործընթացների լիարժեք իրականացման համար Քոլեջը կարիք կունենա բազմազանեցնելու գնահատման և մշտադիտարկման մեխանիզմները, որը հնարավորություն կընձեռի ստորաբաժանմանը հավաքագրելու վերլուծված և առավել օբյեկտիվ տվյալներ: Նշված աշխատանքներն իրականացնելու համար ՈԱ պատասխանատուն և աշխատանքային խումբը կարիք կունենան նաև կարողությունների բարձրացման հավելյալ վերապատրաստումների և փորձի փոխանակման: ՈԱ աշխատանքներն առավել թիրախային և ժամանակի մեջ արդյունավետ կազմակերպելու համար ստորաբաժանումը կարիք կունենա նաև հստակ պլանավորման, որտեղ տեսանելի կլինեն ՈԱ ընթացիկ աշխատանքները՝ ՄՈՒՀ-ի առաջնահերթություններին համապատասխան: Այս ամենը կնպաստի ՈԱ համակարգի ներդրմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որակի ապահովման համակարգը Երանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում ձևավորման փուլում է, գործնականում հստակեցված չեն որակի ապահովման խնդիրներն ու գործառույթները, ներդրված չէ ՊԻԳԲ շրջափուլը, իրականացվող հարցումները թիրախային և խնդիրներ վերհանող չեն, շահակիցները հիմնականում չեն ստանում լիարժեք տեղեկատվություն որակի ապահովման գործընթացների վերաբերյալ, փորձագիտական խումբը գնտնում է, որ Քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Երանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական ուսումնասովանողական կազմ	և Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավարի

07.12.2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմեն Հարությունյան՝ 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը: 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2011 թթ. աշխատել է որպես Թատրոնի և կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2013թթ.՝ ուսումնական մասի վարիչ: 2002 թ. -ից, դասախոս՝ Արվեստի սոցիոլոգիա, Թատրոնի պատմություն, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: 2014-2023թթ. եղել է Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկանը, իսկ 2023թ. -ից Ջարգացման գծով պրոռեկտոր է: Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Քրիստինե Հակոբյան՝ 2004 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ: 2015 թվականին ավարտել է ԳԱԱ-ի «Տնօրինի հիմունքներ», «Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն», «Մարդկային ռեսուրսների կառավարում» 5-ամսյա հեռախար դասընթացները: 2011 թվականին մասնակցել է «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», իսկ 2020 թվականին՝ «Զբոսաշրջություն(ըստ ճյուղերի)» մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքներին: Մի շարք մասնագիտական ձեռնարկների հեղինակ է: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տեղակալների վերապատրաստող է: 2005-2023թթ. եղել է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կադրերի բաժնի ղեկավար, իսկ 2023թ. նույն քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ է:

Նարինե Հովհաննիսյան՝ 2001-2007թթ. սովորել է Պետական Ագրարային Համալսարանի «Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ: 2011-2013թթ. եղել է հայցորդ Ագրարային համալսարանի «Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաներ» ամբիոնում, 2013թ. ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճանը: 2013թ. մինչ օրս ՀԱԱՀ-ի Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաներ ամբիոն, որպես դասախոս է: Դասավանդում է «Հացի, հուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա», «Ճյուղի ձեռնարկությունների տեխնոլոգիական հաշվարկներ», «Բուսական ծագման մթերքների վերամշակման տեխնոլոգիա», «Բուժիչ-կանխարգելիչ սնման հացաբուլկեղենի, հրուշակեղենի և մակարոնի տեխնոլոգիա», «Արտադրանքի հավաստագրում», «Սննդամթերքի վերամշակում» առարկաները: 2020թ. մասնակցել է «Հացաթխման արտադրության տեխնոլոգիա» նախնական մասնագիտական պետական կրթական չափորոշիչի մշակման աշխատանքներին: Մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է:

Ջանիկ Ափանույան՝ 2021թ. -ից մինչ օրս սովորում է Երևանի Նորայր Աճեմյանի անվան համար 2 տարածաշրջանային պետական քոլեջի «Մենեջմենթ» բաժնում, երկրորդ կուրսի ուսանող է: 2019թ. մինչ օրս հաճախում է TUMO ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն և ուսումնասիրում է Գրաֆիկ դիզայն, 3D մոդելավորում, Շարժական գրաֆիկա, Նոր մեդիա Նկարչություն, Լուսանկարչություն: 2023թ մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

03.10.2023թ.-06.10.2023թ.

	03.10.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:00	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	14:20	15:10	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	15:20	16:10	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:20	17:10	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	19:00	100 րոպե

	04.10.2023թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Դասալսումներ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	12:20	13:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:40	15:40	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (հաշվապահ, պրակտիկայի ղեկավար, լաբորանտներ, գրադարանավար, Կարիերայի կենտրոնի պատասխանատու)	16:50	17:50	60 րոպե
7.	Ներկայացման դիտում	18:00	18:35	35 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:45	19:00	15 րոպե

05.10.2023թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն	
1.	Հանդիպում «Ռեժիսուրա» և «Դերասանական արվեստ» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	Հանդիպում «Խոհարարական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում «Ռեժիսուրա» և «Դերասանական արվեստ» կրթական ծրագրերի դասախոսական կազմի հետ	Հանդիպում «Խոհարարական գործ» կրթական ծրագրի դասախոսական կազմի հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում «Ռեժիսուրա» և «Դերասանական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողների հետ	Հանդիպում «Խոհարարական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	12:20	13:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում ՈԻՄ ներկայացուցիչների հետ		14:40	15:20	40 րոպե
6.	Ռեսուրսների դիտարկում		15:30	16:40	70 րոպե
7.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ		16:50	17:30	40 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում		17:40	18:00	20 րոպե
9.	Մոնիթորինգայացման դիտում		18:00	18:40	40 րոպե
10.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում		18:40	19:00	20 րոպե

06.10.2023թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:10	12:00	50 րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	12:10	13:00	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	17:30	190 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ


N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Նախորդ ՌԾ-ի կատարողականը, վերլուծությունը/1 տարի/	1
2.	Ուսանողների և նրանց ծնողների շրջանում իրականացված հարցման վերլուծություններ	1
3.	ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց	1
4.	Բոլոր պաշտոնների անձնագրերը	2
5.	Տարեֆինկացիա /վերջին 3 տարիների/	2
6.	Նախահաշիվ 2022թ., 2023թ.	2
7.	Լրացուցիչ վարձատրված և խրախուսված դասախոսների ցանկ /վերջին 2 տարի/	2
8.	Ուսումնառության նյութեր 3 ՄԿԾ-ների մասնագիտական մոդուլներից, թեմանիկ պլաններ, մուդուլային ծրագրեր, ուսպլաններ	3
9.	Պրակտիկայի նոր օրագրեր և ծրագրեր	3
10.	Դասաուցակ, ժամատախտակ	3
11.	Դասի պլաններ	3
12.	Պրակտիկայի լրացված օրագրեր 3 կրթական ծրագրերի շրջանակներում	3
13.	Այլ կրթական ծրագրերի պետական քննությունների հարցատոմսեր	3
14.	Իրավիճակային խնդիրների օրինակներ, անհատական աշխատանքների օրինակներ, վերլուծական աշխատանքներ, զեկույցներ	3
15.	Դիմումներ, գրություններ, որոնք ուղարկվել են ՄԿՈՒԶԱԿ ՊԿԶ-ների վերանայման առաջարկներով	3
16.	Զգայորոշման քարտեր/գնահատման քարտեր/	3
17.	Ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվություններ	3
18.	Ուսանողների թիվը այցի օրվա դրությամբ	4
19.	Ընդունելության քննության ծրագրեր	4
20.	Շրջանավարտների բազա՝ ըստ մասնագիտությունների /վերջին 5 տարիների/	4
21.	Կարիերայի կենտրոնի գործունեության կարգ	4
22.	Դասախոսի մրցույթի արձանագրություն, հարցաշար	4
23.	Մրցութային կարգով ընդունված դասախոսական կազմի թվաքանակ	5
24.	Դասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի քանակ	5
25.	Ուսանողների շրջանում դասախոսներից բավարվածության հարցաշար, վերլուծություն	5
26.	Հաստիքացուցակ	5
27.	Մենթորության հարցաթերթի լրացված օրինակ, վերլուծություն	5
28.	Դասալսումների արդյունքներ, վերլուծություններ	5
29.	Ներկայացումից հետո հարցումների պատասխաններ և վերլուծություններ	5
30.	Դասախոսների կողմից գրված ձեռնարկներ	6
31.	Ուսանողների կողմից իրականացվող ինքնուրույն, հետազոտական աշխատանքներ	6

32.	Ներառական կրթություն ստացող ուսանողների քանակ	6
33.	Վերջին երեք տարիների կարճաժամկետ ծրագրերի ցանկ	7
34.	Բոլոր ստորաբաժանումների հաշվետվություններ /վերջին 3 տարիների/	7
35.	Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականություն	8
36.	Բուհերի և գործատուների ցանկ, որոնց հետ գործում է քոլեջը:	8
37.	Արտաքին կապերի և միջազգայնացման կենտրոնի գործունեության կարգը	8
38.	Արտաքին կապերի և միջազգայնացման կենտրոնի գործունեության կարգը-լինքերը չեն աշխատում	9
39.	Քոլեջի ունեցած բոլոր համագործակցության բոլոր պայմանագրերը	9
40.	Որակի ներքին ապահովման ենթակառուցվածքի կազմ, աշխատանքային խումբ	10
41.	Ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի պատասխանատուի/ների պաշտոնի նկարագիր	10
42.	Հաստիքացուցակ և տարեֆիկացիա 2023-2024թթ.	10
43.	Որակի պատասխանատուի և/կամ աշխատանքային խմբի պլանները և հաշվետվությունները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ (հատուկ առարկայական, մոնտաժի և կինոդիման և այլ)
2. Լաբորատորիաներ (խոհանոցներ, ոսկերչություն և վարսահարդարման արհեստանոցներ, պարասրահներ, փորձասենյակ, լուսանկարչություն տաղավար և այլ),
3. Մարզադահլիճ
4. Գրադարան
5. Թատերական դահլիճ
6. Բուժկետ
7. Վարչական աշխատասենյակներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



* Որակի ներքին ապահովման ենթակառուցվածք-ը, Մանկավարժական խորհուրդը և Ուսանողական խորհուրդը անկախ են գործում:
Մյուս ստորաբաժանումները միմյանց հետ փոխկապակցված են:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագիր
2. ՄԿՈԻ- Մասնագիտական կրթություն և ուսուցում
3. ՄԿՈԼԶԱԿ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգայի կենտրոն
4. ԿԳՄՄՆ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
5. ՈԱԱԿ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ
6. ՌԾ- Ռազմավարական ծրագիր
7. ՌԴ-Ռուսաստանի Դաշնություն
8. ՈԱՇ Որակավորումների ազգային շրջանակ
9. ՄՊԸ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
10. ՊԿԶ Պետական կրթական չափորոշիչ
11. ՈԼԽ Ուսանողական խորհուրդ